

ՀԱՏՎԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1918-1919 ԹԹ.)*

Բանալի բառեր - Հայաստանի Հանրապետություն, արևմտահայ փախստականներ, հատվածականություն, հատվածականության հաղթահարման քաղաքականություն, փախստականների տեղավորման քաղաքականություն, Արևմտահայ 2-րդ համագումար:

Մուտք

Հատվածականությունը՝ որպես ազգային-քաղաքական հիմնախնդիր, Հայաստանի Հանրապետության իշխանությունների առջև ծառայել է նրա կազմավորման շրջանից սկսած¹: Այս բացասական երևույթը հիմնված էր հայ ժողովրդի երկու խոշոր՝ արևմտահայ և արևելահայ հատվածների հասարակական գիտակցության մեջ տեղ գտած փոխադարձ անվստահության և սառնության վրա, որն իր անմիջական դերակատարությունն ունեցավ միջհատվածական փոխհարաբերություններում:

Հայաստանի Հանրապետությունում հատվածականությունը «...անդրադառնում էր թե երկու հատուածների փոխյարաբերութեանց, թե՛ պետական կեանքի եւ թե՛ կուսակցական կառուցուածքի ու կեանքի վրայ,- վկայաբերել է Մ. Տեր-Մինասյանը (Ռուբեն),- Տաճկահայ եւ ռուսահայ խորթ կը զգային իրարու, եւ շատ վայրերում, շատ անգամներ անպատեհութիւններ եւ ցավալի դէպքեր տեղի կ'ունենային»²: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կայունության ապահովման և հզորացման համար անհրաժեշտ՝ արևմտահայ փախստականների ռազմաքաղաքական ներուժը՝ հանրապետության իշխանությունները չէին կարող անտեսել պետության նկատմամբ նման վերաբերմունքը: Արևմտահայ փախստականները և հատկապես նրանցից կազմված զինված խմբերը ներքաղաքական լուրջ գործոն էին ինչպես հանրապետության ներքին կյանքն ապակայունացնելու, այնպես էլ կայունությունն ապահովելու առումով: Հանրապետության իշխանությունների համար երկրի պետական շինարարության արդյունավետ իրականացմանը, սոցիալ-տնտեսական զարգացմանը և ռազմաքաղաքական հզորացմանն ուղղված քաղաքականության

ՎԷՄ համահայկական հանդես, ԺԱ (ԺԷ) տարի, թիվ 4 (68), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2019

* Ընդունվել է տպագրության 20.09.2019:

¹ Տե՛ս **Հայրապետյան Կ.**, Հատվածականության հիմնախնդիրը Հայաստանի առաջին Հանրապետությունում..., «ՎԷՄ» համահայկական հանդես, Ե (ԺԱ) տարի, 2013, N 2 (42), էջ 58-76:

² **Ռուբեն**, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հատ. է, Գ հրատ., Թեհրան, 1982, էջ 150:

մեջ հատվածականությունը, ըստ էության, վերածվել էր իրական խոչընդոտի: Դա է պատճառը, որ Հայաստանի Հանրապետության համար կարևոր և առաջնահերթ լուծումներ պահանջող հիմնանպատակ էր հատվածականության հաղթահարումը³:

Այս մասին նախարար-նախագահ (վարչապետ) Հ. Քաջազունին և Հայաստանի Խորհրդի անդամ Ս. Վրացյանը՝ որպես Հայաստանի Հանրապետության գործադիր և օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ, հայտարարել են 1919 թ. փետրվարի 6-ին Արևմտահայ 2-րդ համագումարում⁴: Ընդ որում, հատվածականության հաղթահարմանն ուղղված քաղաքականությունը որոշակիորեն դրսևորվել է ինչպես Հայաստանի Հանրապետության առաջին և երկրորդ կառավարությունների գործունեության շրջանում, այնպես էլ դրանց հաջորդած ներքին և արտաքին քաղաքական ձեռնարկումներում:

Թվում էր, թե հանրապետության իշխանություններն առաջին հերթին պետք է լծվեին հատվածականության հաղթահարմանն ուղղված համապատասխան ծրագրի մշակմանը, որից հետո՝ միջոցներ ձեռնարկեին դրա իրագործման համար: Սակայն նման ամփոփ ծրագրի հանրապետության իշխանություններն այդպես էլ չեն մշակել ինչպես Արևմտահայ 2-րդ համագումարին նախորդած, այնպես էլ դրան հաջորդած ժամանակաշրջանում: Եվ դա հասկանալի էր, քանզի ծրագրի մշակման համար առաջին հերթին անհրաժեշտ էր հատվածականության՝ որպես ազգային-քաղաքական երևույթի և նրա դրսևորումների համակողմանի ուսումնասիրության իրականացում: Միայն ուսումնասիրություններն ու վերլուծությունները և դրանց հիման վրա արված առաջարկությունները հնարավորություն կտային մշակելու երկրի ներքին և արտաքին իրողություններին համահունչ մի ծրագիր: Մինչդեռ հանրապետության իշխանություններն այլ մոտեցում էին որդեգրել: Նրանք պետական շինարարության, երկրի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված իրենց քաղաքական ձեռնարկումներում միշտ հաշվի էին առնում ազգային-քաղաքական այդ հիմնահարցին առնչվող հանգամանքները և դրանց համապատասխան լուծումներ տալիս: Ընդ որում, հատվածականության հաղթահարմանն ուղղված լուծումներն առաջադրվել են ինչպես պետական շինարարության օրակարգային հարցերի, այնպես էլ արևմտահայերին վերաբերող քաղաքական ու սոցիալ-տնտեսական առանձին խնդիրների ծագման պարագայում՝ միշտ հաշվի առնելով ներքին և արտաքին անհրաժեշտ պայմանների ու համապատասխան միջոցների առկայությունը:

Ակներև է, որ առանց միջհատվածական հարաբերությունների կարգավորման անհնար կլինեին համահայկական հիմնահարցերին հայանպաստ լուծումներ տալը: Երկու հատվածների միասնությունն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ էր գործադրել այնպիսի քաղաքականություն, որը կհանգեցներ նրանց միջև հարաբերություններում գոյություն ունեցող անվստահության, սառնության և խորթության, իսկ որոշ դեպքերում՝ նաև թշնամական վերաբերմունքի վերացմանը: Ուստի հատվածականության հաղթահարման նպատակով իրականացվեցին այնպիսի քաղաքական քայլեր և սոցիալ-տնտեսական ձեռնար-

³ Տե՛ս Հայրապետյան Կ., Հատվածականության հաղթահարման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում, «Վեմ» համահայկական հանդես, Ժ (ԺԶ) տարի, 2018, N 4 (64), էջ 164-209:

⁴ Տե՛ս Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, Թիֆլիս, տպ. «Աշխատավոր», 1919, էջ 4-5, տե՛ս նաև «Աշխատանք», Եր., 11 փետրվարի 1919 թ.:

կումներ, որոնք նպատակաուղղված էին արևմտահայ և արևելահայ հատվածների միջև համերաշխության հաստատմանը, ինչը պարարտ հող էր ապահովելու համազգային միասնության համար: Այդ նպատակով հանրապետության իշխանություններն իրականացրել են արևմտահայ փախստականներին ինքնամեկուսացված վիճակից դուրս բերելու քաղաքականություն՝ ապահովելով երկրի ներքաղաքական և տնտեսական կյանքին նրանց ներգրավման համար անհրաժեշտ քաղաքական, իրավական և սոցիալական նվազագույն պայմանները:

Ներքին և արտաքին քաղաքական գործընթացներում արևմտահայ և արևելահայ հատվածների համագործակցությունը հնարավոր կլիներ այն դեպքում, երբ նրանց ղեկավար շրջանակները երկուստեք առաջադրեին համազգային այնպիսի գաղափարներ կամ, ինչպես ժամանակին ասել են, «նոր իդեալներ», որոնք ընդունելի կլինեին երկու հատվածների և՛ քաղաքական ղեկավար շրջանակների, և՛ ժողովրդական զանգվածների համար: Համազգային նպատակների և իդեալների իրականացմանն ուղղված համատեղ ու համերաշխ գործունեության շնորհիվ բնական ճանապարհով տեղի կունենար երկու հատվածների համախմբումը: Միասնական նպատակների ու իդեալների շուրջ համազգային համախմբումը և համերաշխ գործունեությունը եղել են հատվածականության հաղթահարման հիմնական ու գործնական միջոցը, ինչը ենթադրում էր նպատակաուղղված պետական քաղաքականության իրականացում:

1. Արևմտահայ փախստականների տեղավորման քաղաքականությունը որպես հատվածականության հաղթահարման առաջին քայլ

Հատվածականության հաղթահարմանն է ուղղված եղել փախստականների հանդեպ գործադրված ՀՀ պետական քաղաքականությունը, որը, ազգային-ռազմավարական խնդիրներից զատ, հետապնդել է նաև միջհատվածական համերաշխության հաստատման, երկու հատվածների միջև համագոյակցության ապահովման նպատակներ: Հանրապետության իշխանություններն այդ քաղաքականությունը հռչակել և օրենսդրորեն ձևակերպել են Հայաստանի Հանրապետության առաջին կառավարության գոյության շրջանում (1918 թ. օգոստոս-հոկտեմբեր): 1918 թ. օգոստոսի 3-ին վարչապետ Հ. Քաջազնունին Հայաստանի Խորհրդում ներկայացրել է իր ձևավորած առաջին կառավարության ծրագրային հայտարարությունը: Երկրում ստեղծված իրավիճակը նա անվանել է «կատաստրոֆային» (աղետալի): «Անիշխանության» առաջացման պատճառների թվում նա նշել է նաև «հարյուր հազարներով հաշվող անտուն և անանուն գաղթականությանը»⁵: Փախստականների հարցում պետական քաղաքականությունը ներկայացվել է հայտարարության՝ ներքին գործերին վերաբերող բաժնի 5-րդ կետում հետևյալ վերտառությամբ. «Տնօրինել գաղթականների և փախստականների վի-

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի միստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2010, էջ 10:

ճակը՝ մասամբ վերադարձնելով իրենց նախկին տեղերը, մասամբ տեղավորելով նոր վայրերում»⁶:

Փախստականների հարցում պետական քաղաքականությունը հիմնվել է մինչև հանրապետության կազմավորումը փախստականների խնամատարության գործում ազգային իշխանությունների ձեռք բերած փորձի վրա: Հայաստանի Հանրապետության իշխանություններն իրականացրել են փախստականների հիմնախնդրի լուծմանն ուղղված այնպիսի քաղաքականություն, որի առաջնահերթ խնդիրներից էր փախստականների տեղավորումը կամ իրենց նախկին, կամ նոր՝ բնակիչների կողմից լքված, ազատ բնակավայրերում մշակության համար տրամադրելով նաև ազատ հողերը: Ընդ որում, նախկին բնակավայրեր պետք է վերադառնային արևելահայ փախստականները, իսկ նոր բնակավայրերում բնականաբար պետք է տեղավորվեին արևմտահայ փախստականները, քանի դեռ վերջիններիս՝ Արևմտյան Հայաստան տունդարձը օսմանյան Թուրքիայի իշխանությունների հայտայց քաղաքականության պատճառով անիրականանալի էր:

Արևելահայ փախստականների տունդարձի խնդիրն ամրագրվել է ՀՀ կառավարության 1918 թ. օգոստոսի 3-ի ծրագրային հայտարարության արտաքին գործերի բաժնում: Այստեղ կարևորելով Օսմանյան կայսրության հետ հաշտության «ամրացումը» և «բարիդրացիական հարաբերությունների» հաստատումը՝ կառավարությունը պարտավորվել է «խստիվ կատարել այն բոլոր պարտականությունները, որ մենք հանձն ենք առել Օսմանյան կայսրության հանդեպ և հետևել, որ Օսմանյան կայսրությունը իր կողմից անի նույնը մեր վերաբերմամբ: Մասնավորապես լուծել Օսմանյան գործերի մեր երկրից դուրս բերելու հարցը և գաղթականների վերադարձը»⁷: Հայտնի էր, որ թեև արևելահայ գաղթականների տունդարձի հարցը սկզբունքորեն դրական լուծում էր ստացել Բաթումի բանակցություններում⁸, սակայն օսմանյան Թուրքիայի իշխանությունների հետ հավելյալ դիվանագիտական շփումների և բանակցությունների միջոցով վերջիններիս՝ նախկին բնակավայրեր վերադարձի խնդիրն այդպես էլ գործնական լուծում չստացավ:

«Թուրքահայ փախստականութիւնը, որու թիւը Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ 70-80.000 կը հաշուի, ներկայիս ծայրայեղ թշուառ ու ողբալի պայմաններու մէջ կը գտնուի,- նշված է 1918 թ. օգոստոսի 11-ին Արևմտահայ խորհրդի Երևանի շրջանային մարմնի դիվանի կողմից Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարին ուղղված գրության մեջ:- Հին փախստականութեան վրայ, վերջին դեպքերու հետևանքով, աւելացաւ հոծ փախստական ազգաբնակչութիւն մը. Երկրից, Սուրմալուի, Սարդարաբադի, Ղարսի ևն շրջաներէն: Վերոյիշեալ բոլոր փախստականները, բացարձակապէս անգործ են և նիւթական ամեն տեսակ աղբիւրներէ զուրկ: Հանրապետութեան սահմաններու մէջ, անոնք սովի ուրականի առաջ կանգնած են»⁹: Նորանկախ հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում ո՛չ պետությունը, ո՛չ էլ հասարակությունը, ի դեմս ցաքուցրիվ գործող բարեգործական կազմակերպությունների, պարզապես ի վիճակի չէն եղել արևմտահայ փախստականներին ցուցաբերելու այնպիսի օժանդակություն և աջակցութեամբ:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:

⁷ Նույն տեղում, էջ 11:

⁸ Տե՛ս **Հայրապետյան Վ.**, Փախստականների հարցը Բաթումի բանակցությունների ավարտական փուլում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Եր., 2016, էջ 60-72:

⁹ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 500, թ. 142:

յուն, ինչպիսին ցուցաբերվել է մինչև 1917 թ. վերջերը: Միաժամանակ հանրապետության իշխանությունները պետք է ջանք գործադրեին, որ արևմտահայ փախստականները չմեկուսացվեին երկրի տնտեսական ու քաղաքական կյանքից, այլ ընդհակառակը՝ ներգրավվեին դրանում: Սա եղել է հատվածականության հաղթահարմանն ուղղված քաղաքականության կարևոր գործոններից մեկը: Հանրապետության տնտեսական և ներքաղաքական կյանքից արևմտահայ փախստականների մեկուսացման հանգամանքը իշխանությունների համար զգալի վտանգ է ներկայացրել: Մի կողմից, լինելով միայն սոցիալական օգնության սպառողներ, այսինքն՝ լրկ նպաստառուներ, արևմտահայ փախստականները ծանր բեռ էին լինելու փոքրածավալ, արդեն իսկ քայքայված տնտեսություն ունեցող հանրապետության համար: Մյուս կողմից՝ ինքնամփոփ, մեկուսացված վիճակում գտնվող արևմտահայ փախստականներն իրենց զինված խմբերով իրական վտանգ կարող էին ներկայացնել երկրի ներքաղաքական կայունության համար: Հանրապետությունում ինքնամփոփ, մեկուսացված գոյավիճակի վառ օրինակ են տվել սասունցիները: «Սասունցիք մի ուրոյն աշիրէթի պէս ապրում էին իրենց համար,- գրել է Ա. Ջամալյանը,- չէին թոյլ տալիս, որ որեւէ մէկը իրենց ներքին գործերին միջամտի, ինչպէս որ իրենք էլ չէին միջամտում ուրիշի գործերին, եւ կառավարական ոչ մի կարգադրութիւն իրենց համար պարտադիր չէին համարում, մինչեւ որ այդ կարգադրութիւնը չգար իրենց աչքում աշիրթապետի հանգամանք առած «Ռուբէն փաշայի»¹⁰ անունով»¹¹: Նման պայմաններում ազատ և լքված հողերում արևմտահայ փախստականներին տեղավորելը եղել է միակ իրատեսական քաղաքականությունը:

Փախստականների տեղավորման քաղաքականությունն իր օրենսդրական ձևակերպումն է ստացել 1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին: Երկար և բուռն քննարկումների արդյունքում Հայաստանի Խորհուրդն ընդունել է փախստականական չորս օրենքներ¹²: Այդ օրենքները մշակվել և նիստերին ներկայացվել են Հայաստանի Խորհրդի գաղթականական հանձնաժողովի կողմից: Հայաստանի Խորհրդում, ի թիվս 14 այլ մշտական հանձնաժողովների, գործել է նաև գաղթականական հանձնաժողով¹³: Գաղթականական հանձնաժողովի կազմում են եղել պատգամավորներ Մ. Տեր-Մինասյանը, Ա. Բաբայանը, Հ. Մելիքյանը, Թ. Ավդալբեկյանը, Գ. Տեր-Օհանյանը, Ս. Ռիզա Միր-Բաբաևը և Յ. բեկ Թեյմուրովը¹⁴: Փախստականության հարցն առաջին անգամ Հայաստանի Խորհրդում քննարկման առարկա է դարձել 1918 թ. սեպտեմբերի 1-ին: Խորհրդի նիստում փախստականության հարցի վերաբերյալ ծավալուն զեկուցումով հանդես է եկել պատգամավոր, ճանաչված դաշնակցական գործիչ Ռուբենը¹⁵: Քննարկման արդյունքում ընդունվել է սոցիալ-դեմոկրատական խմբակցության ներկայացրած բանաձևը, որով պահանջվում էր կազմակերպել գաղթականությանն աշխատանքի մեջ ներգրավելու գործը:

Փախստականներին աշխատանքի միջոցով օժանդակություն ցուցաբերելու մասին առաջին անգամ բարձրաձայնվել է Արևմտահայ 1-ին համագումարում (1917 թ. մայիսի 2-11): Այդ

¹⁰ Խոսքը Մ. Տեր-Մինասյանի (Ռուբենի) մասին է:
¹¹ **Ջամալեան Արշակ**, Յ. Քաջազունին եւ Հ.Յ. Ղաշնակցութիւնը, «Հայրենիք», Պոսթըն, N 8, յունիս, 1924, էջ 70:
¹² Տե՛ս **Հայրապետյան Կ.**, Փախստականների նկատմամբ պետական քաղաքականության օրենսդրական ձևակերպումը Հայաստանի Հանրապետությունում (1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր), «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2004, N 1 (165), էջ 39-48:
¹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 15, թթ. 15-16:
¹⁴ Տե՛ս «Հորիզոն», Թիֆլիս, 7 սեպտեմբերի 1918 թ., նույնը տե՛ս «Ժողովուրդ», Եր., 25 օգոստոսի և 19 սեպտեմբերի 1918 թ.:
¹⁵ Տե՛ս «Կառավարության լրաբեր», Եր., 6 սեպտեմբերի 1918 թ.:

սկզբունքն ամրագրվել է Վ. Փափազյանի կողմից առաջարկված՝ փախստականական ազգային մարմինների գործունեության մասին 51 կողմ և 8 դեմ ձայներով ընդունված բանաձևում¹⁶։ Արձանագրելով փախստականական ազգային մարմինների աշխատանքում տեղ գտած մի քանի թերություններ՝ բանաձևում նշվել է նաև, որ այդ մարմինները փախստականներին աշխատանք տալու փոխարեն իրականացրել են միայն նպաստների բաշխումը՝ փախստականներին օգնություն ցուցաբերելու գործը դիտելով սոսկ որպես մարդասիրական գործունեություն, «մինչդեռ հալածական թրջահայության գոյության պահպանման գործը պիտի նկատվեր գերազանցապես ազգային-հասարակական նշանակություն ունեցող գործ»¹⁷։

1918 թ. սեպտեմբերի 28-ին առաջինն ընդունվել է «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» օրենքը¹⁸։ Հռչակելով կարիք ունեցող փախստականներին ցուցաբերվող օգնությունն աշխատանքի միջոցով կազմակերպելու հիմնարար սկզբունքը՝ օրենքն ամրագրել է, որ «Հայաստանի սահմաններում գտնված պետական ազատ», «նաև լքված և անտեր» հողերը «տրվում են գաղթականներին՝ մշակելու»¹⁹։ Տեղավորման քաղաքականության օրենսդրոհն ամրագրումն առաջին հերթին նպատակ է ունեցել օրինականացնելու արևմտահայ փախստականների կողմից 1918 թ. Արևելյան Հայաստանում տեղավորվելու ուղղությամբ ինքնուրույն իրականացված գործողությունները²⁰։ 1918 թ. գաղթի ժամանակ արևմտահայությունը «զինուած էր եւ ւեյի կազմակերպած՝ ներքնապէս։ Իրաքանչիւր նահանգի ժողովուրդը հասարական ուժ մը կը ներկայացնէր»²¹, - վկայել է Կ. Սասունին։ Արևմտահայ փախստականները, ղեկավարվելով Ռուբենի մշակած ծրագրով, Արևելյան Հայաստանում իրենց տեղավորման խնդիրը լուծել են ինքնուրույն։ Օգտագործելով զինված զորախմբերը՝ նրանք հաստատվել են ոչ միայն լքված հողերում, այլև իրենց կողմից մոսուլմաններից մաքրված բնակավայրերում։ «Պարզ տրամաբանութիւն մ'ունէր դէպի Արարատեան Հայաստան դիմող տաճկահայ զինուած զանգուածը,- վկայել է Կ. Սասունին։- Անիկա կը մտածէր, եթէ թուրքը բռնի ուժով զինք դուրս կը քշէ իր հինավուրց հայրենիքէն, ու ինքը Արարատն անցնելէն յետոյ, անհող ու անծածք բազմութիւն մը պիտի դառնայ, իր մարդկային սրբազան իրաւունքն է գրաւել, զէնքի ուժով, թաթարական հողերը եւ բնակիլ հոն, որպէս իր ՆՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ»²²։

Արևմտահայ «նոր» փախստականներն ակնկալիքներ չեն ունեցել ինչպես տեղի հայ ազգային, այնպես էլ Անդրկովկասի պետական իշխանություններից, քանի որ նրանց ղեկավարները տեղյակ էին, որ «հին» փախստականությունը 1918 թ. առաջին կեսին զրկված էր պետական նպաստ և «կենսական զանազան անհրաժեշտ մթերքներ» ստանալու հնարավորությունից²³։ Բնական է, որ թվաքանակով մի քանի անգամ ավել «նոր» գաղթականության ղեկավարությունը որևէ հույս չի փայփայել իշխանություններից պետական նպաստ և օգնություն ստանալու առումով։ Պարզ է, որ նման պայմաններում արևմտահայ

¹⁶ Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., «Հայաստան», 1993, էջ 30։

¹⁷ Նույն տեղում, էջ 31։

¹⁸ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), Եր., 1998, էջ 6։

¹⁹ Տե՛ս նույն տեղում։

²⁰ Տե՛ս Հայրապետյան Կ., Արևմտահայ փախստականների տեղավորման քաղաքականությունը նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետությունում, «Հայագիտության հարցեր» հանդես, Եր., 2017, էջ 112-121։

²¹ Սասունի Կ., Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Պոսթըն, 1927, էջ 169։

²² Նույն տեղում, էջ 172։

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 500, թ. 142։

փախստականները պետք է ձգտեին իրենց ուժերով լուծելու գոյապահպանման խնդիրը: Չակնկալելով Արևելյան Հայաստանում գտնել օժանդակություն և օգնություն՝ արևմտահայ փախստականների այդ զանգվածն իր ֆիզիկական գոյությունը պահպանելու և ապրուստ հայթայթելու համար ապավինել է սեփական զենքին և կազմակերպվածությանը: Իրենց գոյապայքարը շարունակելու գործում նրանք հույսը դրել են Արագածից մինչև Ղարաբաղ և Ջանգեզուր ընկած հայկական լեռնամասերի վրա: Չհավատալով Բաթումում ստորագրված «թրքական հաշտության դաշնագրին»՝ արևմտահայ փախստականները համոզված էին, որ Բաքուն գրավելուց հետո թուրքերը «երկաթե օղակի մէջ պիտի առնէին մնացորդ հայութիւնը եւ պիտի ջանային խեղդել»²⁴: Այդ հեռանկարը նկատի ունենալով՝ «տաճկահայութիւնը կը մտածէր ինքնապաշտպանողական դիմադրութեան մը մասին եւ կը գտներ որ Ն. Բայազիտի, Ջանգեզուրի եւ Ղարաբաղի բարձունքները կրնային դառնալ ամուր բերդեր թրքական խոշոր բանակներու դէմ հայութեան ֆիզիկական գոյութիւնը պահպանելու, գոնէ ժամանակի մը համար»²⁵: Այդպիսին է եղել նրանց առաջնորդ Մ. Տեր-Մինասյանի մշակած ծրագիրը, որով նրանք անշեղորեն ղեկավարվել են²⁶:

Արևմտահայ փախստականներին տեղավորելու խնդիր լուծումը կենսագործել է Հայաստանի Հանրապետության առաջին կառավարության ներքին գործերի նախարարությունը, որը ղեկավարել է Ա. Մանուկյանը: Հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ներկայացուցիչները շատ լավ գիտեին նրան՝ որպես հայ ազգային-ազատագրական շարժման առաջնորդներից, 1915 թ. Վանի ինքնապաշտպանության և Վանի նահանգապետության ղեկավար գործիչներից, Արևմտահայ 1-ին համագումարի գործուն մասնակիցներից մեկի: Նրա ղեկավարած նախարարությունում կազմավորվում է գաղթականական բաժնի տեղավորման բաժանմունքը: Հանրապետության իշխանությունները ոչ միայն որդեգրել էին արևմտահայ փախստականներին տեղավորելու քաղաքականությունը, այլև այդ գործընթացներն իրականացնող ստորաբաժանումների ղեկավարներ, որպես կանոն, նշանակում էին արևմտահայերին: Այսպես՝ 1918 թ. սեպտեմբերի 5-ին «ներքին գործոց մինիստրության գաղթականական բաժնի տեղավորման բաժանմունքի կառավարիչ» է նշանակվել արևմտահայ ազգային-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ Վահագն Քրմոյանը²⁷: Հանրապետության այն շրջաններում, որտեղ կային արևմտահայ փախստականների մեծ կուտակումներ, ներքին գործերի նախարարության կողմից նշանակվել են գաղթականական հարցերով զբաղվող արևմտահայ կառավարիչներ: Այս գործելակերպը գալիս էր հաղթահարելու այն վերաբերմունքը, որն արևմտահայ փախստականները դրսևորում էին հանրապետության իշխանությունների, մասնավորապես՝ կառավարության նկատմամբ, և որի մասին վկայաբերել է Մ. Տեր-Մինասյանը. «...նոր կազմակերպուած կառավարութիւնը, որի պաշտօնէից և գործառնութեանց մէջ դեռ եւս իշխում էին ռուսական ոգին, օրէնքն ու լեզուն, չէր կարողանում լայն ասպարէզ տալ թրքահայ տարրին պետական վարչաձեւին մէջ, մի երեւոյթ, որ առաւել եւս օգտագործում էր հատուածական ձգտումներով տարուած անհատների կողմից»²⁸:

²⁴ Սասունի 4., մշվ. աշխ., էջ 180:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Տե՛ս Ռուբեն, մշվ. աշխ., էջ 102:

²⁷ Տե՛ս «Կառավարության լրագրեր», Եր., 10 սեպտեմբերի 1918 թ.:

²⁸ Ռուբեն, մշվ. աշխ., էջ 150-151:

Լքված և ազատ հողերի սակավության պատճառով նորաստեղծ հանրապետության իշխանությունները, ի դեմս ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանի, Հայաստանի Խորհրդի գաղթականական հանձնաժողովի անդամ Մ. Տեր-Մինասյանի, փորձել են բազմահազար արևմտահայ փախստականներին տեղավորել տեղացի հայերով և մուսուլմաններով բնակեցված որոշ շրջաններում: Նման քաղաքականության օրինակ էր Գառնիի շրջանի Միլի ձորում փախստականների տեղավորման խնդրի լուծումը՝ օսմանյան Թուրքիայի ներկայացուցիչների իմացությամբ և մասնակցությամբ: Միլի ձորի մուսուլման ազգաբնակչությունը ոչ միայն արևմտահայ, այլև տեղացի փախստականներին թույլ չի տվել վերադառնալ իրենց բնակավայրերը²⁹: Նրանք ընդհանրապես չեն ենթարկվել հանրապետության իշխանություններին՝ հրաժարվելով հարկերը և ապառքները վճարելուց, հացահատիկը հայերին վաճառելուց, գենքն ու զինամթերքը հայկական իշխանություններին հանձնելուց³⁰: Թուրքական զորքերի հրամանատար Խալիլ փաշայի՝ Երևան այցելության ժամանակ ստանալով Գառնիի շրջանի Միլի ձորից թաթարական բնակչությանը տեղահանելու և այնտեղ փախստականներին տեղավորելու համաձայնությունը՝ Ա. Մանուկյանը 1918 թ. սեպտեմբերի կեսերին հանձնարարել է Երևանի գավառային կոմիսար (ոստիկանապետ) Լ. Ամիրխանյանին Միլի ձորում և Զիզինում հաստատել հանրապետության իշխանությունը³¹:

1918 թ. նոյեմբերի 5-ին Միլի ձորի մուսուլման ազգաբնակչությանը հպատակեցնելու նպատակով Բաշ-Գառնիի հայկական զորաջոկատը փոխգնդապետ Մելիք-Շահնազարյանի հրամանատարությամբ³² ու արևմտահայ զինված խմբերի մասնակցությամբ սկսում է ռազմական գործողությունները և նոյեմբերի 12-ին ամբողջությամբ ազատագրում է Միլի ձորը: Միայն մի քանի գյուղերի բնակիչներ են կամավոր լքում դրա տարածքը³³: Այսպիսով «...Միլի ձորը զօրքով եւ թնդանօթներով դատարկուեց թաթարներից, թէւ կը վախենային շատերը, որ Ուլուխանլու նստած թուրքերը միջամտեն: Ինչ էլ որ լինէր, դա անհրաժեշտ էր, հողի խնդիրը մասամբ գոնէ թեթեացնելու համար»³⁴: Այնուհետև սկսվում են Միլի ձորում արևմտահայ և արևելահայ փախստականների տեղավորման աշխատանքները: Արևմտահայերի տեղավորումը ներքին գործերի նախարարը հանձնարարել էր արևմտահայ ճանաչված զինվորական գործիչ Փիլոս Հարությունյանին³⁵:

Մ. Տեր-Մինասյանի մշակած ծրագրին համապատասխան և նրա անմիջական ղեկավարությամբ սասունցիների զինված խմբերն իրականացրել են նաև Ճղնի ձորի և Միլիտերեի շրջանի մաքրագործումը, որից հետո այնտեղ ևս տեղավորվել են արևմտահայ փախստականներ: Ընդ որում, այդ գործողություններն իրականացվել են ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանի իմացությամբ և օժանդակությամբ: Դրանք արևմտահայ փախստականների համար՝ գոյապահպանման, իսկ պետական-քաղաքական գործիչներ Մ. Տեր-Մինասյանի և Ա. Մանուկյանի համար ազգապահպանման և նորաստեղծ հանրապետության ներքին անվ-

²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 500, թ. 105:

³⁰ Տե՛ս նույն տեղում, գ. 58, թ. 1, 9:

³¹ Տե՛ս նույն տեղում, թ. 9:

³² Տե՛ս նույն տեղում, թ. 8:

³³ Տե՛ս նույն տեղում, թ. 10:

³⁴ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 146:

³⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 144, թ. 63:

տանգության ապահովման խնդիրների լուծումներ են հետապնդել: Հատկանշական է, որ նման գործողությունները կազմակերպվել և իրականացվել են արևելահայ հասարակայնությանից, խորհրդարանի պետական-քաղաքական որոշ շրջանակներից գաղտնի³⁶:

Ինչպես տեսնում ենք, Ա. Մանուկյանը և Մ. Տեր-Մինասյանը արևմտահայ փախստականների տեղավորմանն առնչվող խնդիրների լուծման առումով սերտորեն և բավական արդյունավետ համագործակցել են միմյանց հետ: Եվ դա պատահական չէր: Նրանք համագործակցել են նաև արևմտահայ փախստականներին վերաբերող այլ հարցերում: Այսպես, օրինակ, երբ Մ. Տեր-Մինասյանի կարգադրությամբ որբերին տեղավորելու համար առանց օրինական թույլտվության զբաղեցրել են Երևանի դպրոցներից մեկը, Ա. Մանուկյանն արդարացրել է նրան այդ կամայական քայլի համար:

Օրինականացնելով 1918 թ. Արևելյան Հայաստանում տեղավորվելու նպատակով արևմտահայ փախստականների ինքնուրույն ձեռնարկած քայլերը, բնակեցնելով նրանց «լքված և անտեր» հողերում ու ազատ բնակավայրերում արևմտահայերի լիակատար վստահությունը վայելող պետական-քաղաքական գործիչներ Ա. Մանուկյանի և Մ. Տեր-Մինասյանի ղեկավարությամբ հանրապետության իշխանությունների իրականացրած գործողությունները փաստացի միտված են եղել Հայաստանի Հանրապետության նկատմամբ նրանց ավելի քան զուսպ և անկողմնակալ, սառը և անտարբեր³⁷ վերաբերմունքում որոշակի փոփոխություն մտցնելուն: Այն նպատակամղված է եղել վերափոխելու Մ. Տեր-Մինասյանի կողմից նշված «թրքահայ Ազգային Խորհուրդի եւ Հայրենակցական միութեանց այն գաղափարը՝ որ ներկայ Հայաստանը իրենց խորթ միայն «Արարատեան Հանրապետութիւն» մըն է»³⁸:

1918 թ. Արևելյան Հայաստանում արևմտահայ փախստականների ինքնուրույն տեղավորվելու գործողությունների օրինականացումը մի կողմից որոշ չափով մեծացրել էր հանրապետության իշխանությունների նկատմամբ արևմտահայերի վստահությունը, մյուս կողմից նրանք սկսել էին իրենց ավելի ապահով զգալ հանրապետության սահմաններում: Սակայն Արևելյան Հայաստանում առկա սակավահողության պայմաններում արևմտահայ փախստականների կողմից հողերի զավթումն առաջ էր բերել իրենց արևելահայ հարևանների դժգոհությունը և թշնամական վերաբերմունքը: Միաժամանակ, դառնալով հողերի և բնակարանների տերեր, արևմտահայ փախստականները որոշ չափով ձեռքազատվել էին իրենց՝ որպես «եկուորի, գաղթականի» նկատմամբ վերաբերմունքից: «Պիտի նկատել, որ ռուսահայ մասսան տաճկահայերին կը համարէր եկուոր, գաղթական: Նա կը կարծէր թէ այդ մասսան՝ մոտ 200.000 միայն հիւր է իրենց երկրում: Մի քանի վայրերում տաճկահայութիւնը բեռ կը համարուէր իրենց համար: Այդ հոգեբանութիւնը աննշմար չէր մնում տաճկահայերից, որոնց ինքնասիրութիւնը կը վիրատուէր»³⁹, - գրել է Մ. Տեր-Մինասյանը: Հանրապետության իշխանությունների նկատմամբ վստահության առաջացմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ տեղավորման քաղաքականությունը կենսագործել են հենց իրենք՝ Հայաստանի Հանրապետության իշխանությունները՝ ի դեմս արևմտահայ փախստա-

³⁶ Տես Աստուածատրեան Ա., Ռուբինը, «Հայրենիք», յունուար, 1955, N 1, էջ 86-87, տես նաև Ռուբին, նշվ. աշխ., էջ 115-116:

³⁷ Տես Ռուբին, նշվ. աշխ., էջ 150:

³⁸ Նույն տեղում, էջ 151:

³⁹ Ռուբին, նշվ. աշխ., էջ 149-150:

կանների կողմից ճանաչված և հարգված պետական-քաղաքական գործիչներ Ա. Մանուկյանի և Մ. Տեր-Մինասյանի, իսկ ներքին գործերի նախարարությունում և տեղերում արևմտահայ պաշտոնյաների:

Այսպիսով՝ արևմտահայ փախստականների տեղավորման քաղաքականությունն ընդհանրապես և Միլլի ձորի ու նմանօրինակ մյուս գործողությունների իրականացումը մասնավորապես, հետապնդել են ոչ միայն նորաստեղծ հանրապետության ներքին անվտանգության ապահովմանն առնչվող խնդիրների լուծումը: Այդ քաղաքականությունը միաժամանակ միտված է եղել հատվածականության հաղթահարմանը: Վերջինս կարող էր իրականություն դառնալ հայ ժողովրդի երկու հատվածների ազգային-քաղաքական միասնության դեպքում: Իսկ միասնության հասնելու համար անհրաժեշտ էր գործադրել այնպիսի քաղաքականություն, որը կհանգեցնէր երկու հատվածների հարաբերություններում գոյություն ունեցող անվստահության, սառնության և խորթության վերացմանը:

2. Արևմտահայ փախստականների առողջապահական և կրթական առանձին հաստատությունների վերացումը որպես հատվածականության հաղթահարմանն ուղղված ձեռնարկում

1918 թ. վերջերին հանրապետության իշխանություններն իրականացրել են հատվածականության հաղթահարմանն ուղղված ևս երկու կարևոր քաղաքական ձեռնարկումներ: Նրանք մերժել են արևմտահայ առողջապահական ու հանրակրթական առանձին հիմնարկների և հաստատությունների պահպանմանն ուղղված ֆինանսավորումը՝ այդպես կազմալուծելով դեռևս իրենց նախորդած ժամանակաշրջանում ձևավորված՝ արևմտահայ փախստականներին սպասարկող առողջապահական և կրթական տարանջատ համակարգերը: Վերջիններս սկզբում գործել են Արևելյան Հայաստանի ազգաբնակչության համար ստեղծված առողջապահական հիմնարկներին և կրթական հաստատություններին զուգահեռ: Նման մոտեցումն ընդունելի է եղել Հայաստանի Հանրապետության ստեղծմանը նախորդած ժամանակաշրջանում: Սակայն այն միանգամայն անընդունելի էր նորաստեղծ ազգային պետության պայմաններում: Դրանով բացառվել է արևմտահայ և արևելահայ առողջապահական ու հանրակրթական տարանջատ համակարգերի գոյությունը: Նման մոտեցումը կարող էր արևմտահայ փախստականներին մեկուսացնել երկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքից: Ֆինանսական միջոցների սղության, ինչպես նաև հատվածականության վերացման պատճառներով պայմանավորված հանրապետության իշխանություններն իրականացրել են նման ձեռնարկումներ:

Հատկանշական է, որ հանրապետության իշխանությունները տեղացիների և փախստականների համար առողջապահական և կրթական համակարգերի ընդհանրական լինելու անհրաժեշտության մասին քաղաքական լուծումներին միանգամից չեն հանգել: Առողջապահական և կրթական համակարգերի՝ առանձնացված վիճակից միասնականի անցման գործընթացը տեղի է ունեցել հանրության աչքի առջև՝ Հայաստանի Խորհրդում փախստականությանը վերաբերող օրենքների քննարկման ժամանակ:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի Խորհրդում փախստականությանը վերաբերող օրենսդրական ակտերի ընդունումն ընթացել է սուր բանավեճերով բուռն քննարկումների պայմաններում: Սկզբում Հայաստանի Խորհրդում քննարկվել է փախստականների խնամատարության միասնական օրենքի նախագիծը: Անցկացվել է այդ օրենքի նախագծի երկու ընթերցում: Հայաստանի Խորհրդի նիստում գաղթականական հանձնաժողովի կողմից այն ներկայացրել է պատգամավոր Մ. Տեր-Մինասյանը⁴⁰: 1918 թ. սեպտեմբերի 20-ին Հայաստանի Խորհրդում տեղի է ունեցել գաղթականության խնամատարության մասին օրինագծի առաջին ընթերցումը: Օրինագիծը «իր հավելումներով և ուղղումներով» դրվել է քվեարկության և ամբողջովին ընդունվել հանձնվելով խմբագրական հանձնաժողովին⁴¹: Սեպտեմբերի 24-ին Մ. Տեր-Մինասյանը ներկայացրել է «գաղթականության խնամատարության օրենսգիծը վերջին խմբագրությամբ»⁴²: Այնուհետև դաշնակցական ֆրակցիայի կողմից առարկություն է արվել օրենքի նախագծի երկու հոդվածների վերաբերյալ, իսկ պատգամավոր Ս. Տեր-Մարտիրոսյանը հայտնել է ֆինանսական հանձնաժողովի հատուկ կարծիքը: Ապա ելույթ է ունեցել ֆինանսների նախարար Խ. Կարծիկյանը և հայտարարել, «որ ինքը հնարավորություն չի ունեցել սկզբից ծանոթանալու այդ գործին, բայց լսած զեկուցման վրա հիմնվելով, գտնում է, որ այդ օրենսգիծը պետական բյուջեի ձև չի կրում»⁴³ և այդ առումով անընդունելի է: Պատգամավոր Ս. Տեր-Մինասյանն առաջարկել է օրենքի նախագիծը հանձնել ֆինանսական հանձնաժողովին, որպեսզի ֆինանսների նախարարի հետ «խառը ժողովում քննելուց հետո նոր միայն խորհրդին ներկայացվի»⁴⁴: Իր հերթին Մ. Տեր-Մինասյանը «հայտարարում է, որ երբ օրինագծի դեմ առարկում են, պետք է նոր օրինագիծ առաջարկել: Այնուհետև անցնելով խնդրի շտապողականությանը, նա շեշտում է, որ գաղթականությանը այսպես թե այնպես պետք է մի որևէ կերպ նպաստ տալ. դրամական նպաստ տալ մոտավորապես 20 000 կանանց ավելի հեշտ չէ, քան նրանց գործ գտնել: Ապա ավելացնում է, որ սա արդեն օրինագծի 3-րդ ընթերցումն է և որ ջրվիհականոցին վերաբերող հոդվածը օրինագծի մի մասն է կազմում միայն, ուստի և առարկությունները ավելորդ են»⁴⁵: Սակայն ֆինանսների նախարարը նորից «հայտարարում է, որ իրեն տարօրինակ է թվում և որ ոչ մի երկրում ընդունված ձև չէ, որ պետական որևէ հանձնաժողով պահանջե 6 միլիոն բյուջե և ֆինանսների մինիստրը տեղյակ չլինի»⁴⁶: Ի վերջո, քվեարկությամբ ընդունվել է հետևյալ առաջարկությունը. «Վերադարձնել օրինագիծը ֆինանսական հանձնաժողովին վերաքննելու համար»⁴⁷:

Որպես արդյունք՝ միասնական օրենքի նախագիծը մասնատվել է: Սեպտեմբերի 28-ին Հայաստանի Խորհուրդն առանց նախահաշվի հաստատել է «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին»⁴⁸ օրենքը, որը, ըստ էության, փախստականական պետական քաղաքականության սկզբունքների հռչակագիրն է եղել: Ավելի ուշ՝ հոկտեմբերի 8-ին, ընդունվել է կարիքավոր գաղթականների համար ջրվիհականոցներ բացելու մասին օրենքը,

⁴⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 50, 52:

⁴¹ Տե՛ս նույն տեղում, էջ 50:

⁴² Նույն տեղում, էջ 52:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում:

⁴⁸ Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), էջ 6:

և նախահաշիվը հանձնվել է խմբագրական հանձնաժողովին⁴⁹: Միայն հոկտեմբերի 11-ին՝ ձմռան նախաշեմին, «Գաղթական որբերի խնամատարության և դաստիարակչության մասին» օրենքի հետ Հայաստանի Խորհուրդը հաստատել է նաև «Գաղթականներին օգնելու պահանջված ծախքերի 1918 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1919 թ. հունվարի 1-ը նախահաշիվը»⁵⁰: Հայաստանի Խորհրդում նշված նախահաշիվի քննարկումը նույնպես հարթ չի անցել: Հայաստանի Խորհրդի ֆինանսական հանձնաժողովի կողմից զեկուցողը հայտնել է, որ «Ֆին.[անասական] կոմիսիան նկատի ունենալով, որ ծմեռը մոտենում է և անհրաժեշտ է շտապեցնել գաղթ.[ականների] համար բնակարան ճարելու և որբերը պատսպարելու անհետաձգելի գործերը, առաջարկում է նախահաշիվը շտապողական ճանաչել: Առաջարկն ընդունվում է»⁵¹: Նախահաշիվի 4-րդ կետով՝ փախստականների բժշկասանիտարական գործի համար նախատեսվել է ամսական 130.000 ռուբլի, «հինգ ամսվա համար (սկսած օգոստոս ամսից) 650.000 ռ.[ուբլի]»⁵²:

Զեկուցողի կողմից հարցի ներկայացումից հետո պատգամավոր Ս. Խաչատրյանն իր համաձայնությունն է հայտնում ֆինանսական հանձնաժողովին՝ որբանոցների լիկվիդացիայի համար կես միլիոն ռուբլի հատկացնելու մասին վերջին կետը մերժելու վերաբերյալ, «որովհետև նման ձևով ավանս տալ չի կարելի», և, հավանություն տալով նախահաշիվին, «կասկածում է, որ գումարները չնչին են կարիքի նկատմամբ: Ուստի առաջարկում է նախահաշիվը վերադարձնել հանձնաժողովին՝ ավելի լավ մշակելու համար»⁵³:

Այստեղ միջամտում է ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանը: Նա «հայտնում է, որ նախահաշիվը կազմված է գաղթականական կոմիսիայի հետ միասին: Նա սկզբում ավելի էր, ընդհանուր գումարը հասնում էր 28 միլիոն ռ.[ուբլու], սակայն կոմիսիան այն կրճատեց մոտ 14 միլիոն և ինքը համաձայնեց: Այն առաջարկությունը, թե գումարները շատ քիչ են, ճիշտ է, բայց պետք է նկատի ունենալ, որ գները հաշված են պետական գներով»⁵⁴: Ապա, փորձելով օգտագործել իր հեղինակությունը, նա խնդրում է «վերջին կետը՝ կես միլիոն ավանսի մասին, չմերժել, որովհետև դա պարտքերը վճարելու համար է և կվճարվի հետևյալ ձևով. չարաշահություններից խուսափելու համար ես կվերցնեմ գաղթ.[ականական] մարմիններից նրանց պարտքերի ցուցակը ու կվճարեմ: Եթե մերժեք այդ կետը, պարտքեր ունեցողները, որոնք ընդհանրապես հին որբանոցներն են, կծախեն իրենց մթերքները»⁵⁵:

Հանդես գալով ներքին գործերի նախարարից հետո՝ պատգամավոր Ս. Մամիկոնյանն իր անհամաձայնությունն է հայտնել «առաջարկած ձևի հետ պարտքերը վճարելու համար» և ավելորդ համարել նախահաշիվի բժշկասանիտարական մասը, «որովհետև հիվանդանոցները միևնույն պետք է լինեն և բնիկի, և գաղթականի համար»⁵⁶: Նույնպիսի մոտեցում է ցուցաբերել պատգամավոր Ավդալբեկյանը: Այստեղ նորից միջամտել է ներքին գործերի նախարարը՝ հայտնելով, «որ գաղթ.[ականական] մարմինների լիկվիդացիան կատարելու համար անհրաժեշտ է կես միլիոնը, այլապես գործը կձգձգվի ու պե-

⁴⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 54-55:

⁵⁰ Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), էջ 11-12:

⁵¹ Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 60:

⁵² Նույն տեղում:

⁵³ Նույն տեղում:

⁵⁴ Նույն տեղում:

⁵⁵ Նույն տեղում, էջ 60-61:

⁵⁶ Նույն տեղում, էջ 61:

տական գանձարանը կտուժի»: Այս, «գալով հիվանդանոցների առանձին հիմնելուն, հայտնում է, որ ինքը համաձայն էր, բայց բժշկա-սանիտարական կոմիսիան անհրաժեշտ գտավ առանձին պահել»⁵⁷:

Դրանից հետո պատգամավոր Հ. Տեր-Հակոբյանը, համաձայնելով կես միլիոն ավանսի տրամադրմանը, առաջարկել է կոմպրոմիսային տարբերակ՝ «հանել այս նախահաշվից ու ներկայացնել առանձին»⁵⁸: Այդ առաջարկությանը ներքին գործերի նախարարը համաձայնել է: Այնուհետև նախահաշիվը՝ առանց կես միլիոն ավանսի և բժշկասանիտարական մասի, ձայների մեծամասնությամբ հաստատվել է Հայաստանի Խորհրդի կողմից⁵⁹: «Առաջարկություն բժշկասանիտարական հանձնաժողովին»⁶⁰ վերնագիրը կրող օրենքով, որն ընդունվել է Հայաստանի Խորհրդի կողմից 1918 թվականի հոկտեմբերի 23-ին⁶¹, թույլատրվել է կառավարությանը «մինչև գաղթականների բժշկասանիտարական կարիքները հոգալու համար անհրաժեշտ ծախսերի նոր և մանրամասն նախահաշիվ ներկայացնելը՝ կատարել այդ ծախսերը ըստ Հայաստանի Խորհրդի չհաստատված 4-րդ կետի գաղթականական օգնության ծախսերի նախահաշվի»⁶²:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի Խորհրդում քննարկումների ժամանակ Ա. Մանուկյանը նշել է, որ համաձայն էր ընդհանուր հիվանդանոցների հիմնադրմանը, սակայն պառլամենտի բժշկասանիտարական հանձնաժողովը դեմ էր: Փաստացի, հանրապետության իշխանությունների շրջանում նշված հարցի վերաբերյալ եղել են երկու տարբեր մոտեցումներ: Նրանց ներկայացուցիչների մի մասը պաշտպանել է առանձնացված բժշկական հաստատությունները պահպանելու դիրքորոշումը: Այդուհանդերձ, պառլամենտական քննարկումների արդյունքում հանրապետության իշխանություններն ամրագրել են միասնական բժշկասանիտարական համակարգի անհրաժեշտությունը: Հատկանշական է, որ այս քննարկումն ընթացել է Հայաստանի Խորհրդում հասարակության ներկայությամբ: Միաժամանակ Հայաստանի Խորհրդի նիստերի մանրամասն տվյալները ղեկավարել են ինչպես պաշտոնական «Կառավարության լրագրերում», այնպես էլ Երևանում հրատարակվող մամուլում, օրինակ՝ «Ձանգ»-ում:

Հայաստանի Խորհրդում հնչեցված և պաշտպանված այն մոտեցումը, որ «հիվանդանոցները միևնույն պետք է լինեն և բնիկի, և գաղթականի համար», պարտադրել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը ձեռնարկել համապատասխան քայլեր: Նախարարների խորհրդի 1918 թ. նոյեմբերի 18-ի նիստում լսվել է ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանի զեկուցումը, որով նա առաջարկում էր «բժշկա-առողջապահական մասի նոր նախահաշիվը, որը պիտի փոխարինի սրանից առաջ քննության առնաձև և Հայաստանի Խորհրդից վերադարձած փախստականական հիմնարկությունների բժշկական մասի և քաղաքացիական մասի բժշկա-առողջապահական շտապների երկու նախահաշիվներին»⁶³: Նախարարների խորհուրդը որոշել է. «Առաջուս քննության առնու-

⁵⁷ Նույն տեղում:

⁵⁸ Նույն տեղում:

⁵⁹ Տե՛ս նույն տեղում:

⁶⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), էջ 11-12:

⁶¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 68-69:

⁶² Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), էջ 11-12:

⁶³ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 54:

ած և Հայաստանի Խորհրդից վերադարձած փախստականական հիմնարկությունների բժշկական մասի և քաղաքացիական մասի բժշկատողջապահական շտատոների երկու նախահաշիվների փոխարեն ընդունել նոր առաջարկված բժշկատողջապահական նախահաշիվը (1-ն հոկտեմբեր 1918 - 1-ն հունվար 1919 թ.) 1 656 240 ռ. և առաջարկել Հայաստանի Խորհրդի քննությանը»⁶⁴: Այսպիսով՝ «< կառավարությունը համաձայնել է արևելահայ քաղաքացիների և արևմտահայ փախստականների համար կազմակերպել միասնական առողջապահական համակարգ:

Նույն մոտեցումն է ցուցաբերվել նաև կրթության բնագավառում: Նախարարների խորհրդի 1918 թ. դեկտեմբերի 28-ի նիստում քննարկման է դրվել «հանրային կրթության մինիստրի գրությունը, որով նա ներկայացնում է արևմտահայ երեխաների համար առանձին դպրոցներ բանալու մասին արևմտահայ դպրոցների հոգաբարձական խորհրդի առաջարկը և այդ դպրոցների պահպանության նախահաշիվը»⁶⁵: Նախարարների խորհուրդը որոշում է կայացրել՝ «ա) Գաղթականական առանձին դպրոցներ չբանալ, ի նկատի առնելով գաղթականության շարժման մեջ գտնվելու դրությունը, բ) գաղթականների երեխաները ընդունել գոյություն ունեցող դպրոցները, գ) հանրային կրթության մինիստրին հանձնարարել՝ եթե կարիք լինի նախ ընդարձակել եղած համապատասխան դպրոցները և երկրորդ՝ այդ առթիվ լինելիք ծախսերի համար իր ժամանակին հարկավոր առաջարկ և նախահաշիվ մտցնել Մինիստրների Խորհուրդը»⁶⁶: Ինչպես տեսնում ենք, միասնական դպրոցների մասին որոշումը համակողմանի և միանշանակ լուծումներ է պարունակել: Եվ, ի տարբերություն առողջապահական միասնական համակարգի վերաբերյալ օրենսդիր և գործադիր իշխանությունների շրջանակներում ծավալված երկարատև, վայրիվերումներով քննարկումների արդյունքում ընդունված որոշման, միասնական դպրոցների մասին որոշումը եղել է հանրապետության իշխանությունների հստակ և սկզբունքային դիրքորոշման արտահայտությունը: Դրանով է պայմանավորված եղել նաև նրանց անդրդվելի կեցվածքը արևմտահայ ուսուցիչների կողմից այդ որոշման առիթով իշխանություններին ներկայացված բողոքների նկատմամբ:

Այսպիսով 1918 թ. վերջերին հանրապետության իշխանությունների կողմից ընդունվել է միասնական առողջապահական հիմնարկների և կրթական հաստատությունների մասին քաղաքական որոշումը: Այն ունեցել է ոչ միայն ֆինանսական և մասնագիտական շարժառիթներ, այլև հատվածականության հաղթահարման ուղղված դրդապատճառներ: Երկրի ներքին կյանքի համար շրջադարձային այս որոշումները նպատակ են ունեցել դուրս բերելու արևմտահայերին իրենց մեկուսացված վիճակից, խթանելու նրանց սոցիալականացումը՝ ներգրավելով առողջապահական և կրթական ընդհանուր համակարգերից օգտվելու և դրանց գործունեությունն ապահովելու գործընթացներում:

⁶⁴ Նույն տեղում:

⁶⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 85:

⁶⁶ Տե՛ս նույն տեղում:

3. Արևմտահայ 2-րդ համագումարը որպես հատվածականության հաղթահարմանն ուղղված քաղաքականության կարևոր շրջափուլ

Հատվածականության հաղթահարմանն ուղղված քաղաքականության կենսագործումը ենթադրել է հայ ժողովրդի երկու հատվածների և նրանց ազգային-քաղաքական ղեկավար շրջանակների համատեղ ու համախմբված գործունեություն՝ համահայկական, միասնական նպատակները և իդեալները իրականություն դարձնելու ուղղությամբ: Նման գործունեության շնորհիվ նրանք միասին կհաղթահարեին որոշակի ճանապարհ՝ այդ ընթացքում լուծելով առաջացած և երկուստեք ընդհանուր ճանաչված խնդիրները: Այդպիսի միասնական գործունեությունը փաստացի վերածվելու էր միջհատվածական համագործակցության: Որպես արդյունք՝ միջհատվածական հարաբերություններում անխուսափելիորեն ձևավորվելու էր համախմբվածության, համերաշխության որոշակի մթնոլորտ: Նման համագործակցության համար անհրաժեշտ էր հայ ժողովրդի ինչպես արևմտահայ, այնպես էլ արևելահայ հատվածների հասարակական-քաղաքական ղեկավար շրջանակների համախմբումն իրենց կողմից փոխադարձ համաձայնությամբ ձևավորված ազգային-քաղաքական ներկայացուցչական մարմիններում: Նրանցից յուրաքանչյուրը պետք է առաջին հերթին ձևակերպեր և հանրայնացներ մի կողմից՝ արևմտահայ, մյուս կողմից՝ արևելահայ հատվածների ազգային-քաղաքական նպատակները և իդեալները: Նշված մարմինները պետք է ձեռնարկեին ազգային-քաղաքական այդ նպատակների և իդեալների իրականացմանն ուղղված քաղաքական քայլեր, ինչը նրանց համար վերածվելու էր ամենօրյա դժվարին, մեծ ջանքեր պահանջող աշխատանքի:

Միաժամանակ ազգային-քաղաքական այդ մարմիններն անհրաժեշտ են եղել նաև միջհատվածական փոխգործակցության կազմակերպման համար՝ նպատակ ունենալով երկուստեք համազգային ճանաչված խնդիրների լուծումը: Արևելահայ հատվածը պետական մակարդակով, ի դեմս Հայաստանի Խորհրդի և Հայաստանի Հանրապետության կառավարության, արդեն իսկ ձևավորել էր ազգային-քաղաքական այդպիսի մարմիններ: Հերթը արևմտահայերին էր: Ուստի անհրաժեշտ էր արևմտահայ փախստականներին դուրս բերել Հայաստանի Հանրապետության ներքաղաքական դաշտ, վեր հանել նրանց հուզող առաջնահերթ խնդիրները, ձևակերպել ազգային-քաղաքական նպատակները և իդեալները, նրանց կողմից ընտրված ղեկավարների հետ սկսել քաղաքական երկխոսություն՝ միջհատվածական քաղաքական համագործակցության պարարտ հողը նախապատրաստելու համար: Նման միջհատվածական քաղաքական շփումների միջոցով միայն կարելի էր հասնել հանրապետության առջև ծառայած ներքաղաքական կարևոր հիմնախնդիրներից մեկի՝ հատվածականությանն առնչվող խնդիրների լուծմանը: Այդպիսի գործելակերպի միջոցով միայն հնարավոր կլիներ հասնել նաև հատվածականության հաղթահարմանը: Դա է պատճառը, որ հանրապետության իշխանությունները, գիտակցելով մոտ ապագայում կայանալիք արևմտահայ համագումարի հատվածական բնույթը, կարևորել են դրա անցկացումը:

1918 թ. վերջերին տեղի ունեցած արտաքին քաղաքական զարգացումները նպաստավոր պայմաններ էին ստեղծել Հայաստանի Հանրապետությունում արևմտահայ ազգային քաղա-

քական մարմինների կազմավորման համար: Թուրքական զորամասերը, Մուդրոսի զինադադարի (1918 թ. հոկտեմբերի 30) համաձայն, պարպում էին Արևելյան Հայաստանի տարածքը: 1918 թ. նոյեմբերին Առաջին աշխարհամարտն ավարտվեց Անտանտի պետությունների հաղթանակով: «Համաշխարհային պատերազմը վերջացավ, մեր դաշնակիցները հաղթեցին, մենք հաղթեցինք»⁶⁷, - նշված է 1918 թ. դեկտեմբերի 19-ին ընտրված Արևմտահայ 2-րդ համագումարը հրավիրող կազմակերպիչ կոմիտեի «Արևմտյան Հայաստանի փախստական հայությանը»⁶⁸ ուղղված 1919 թ. հունվարի 1-ի կոչում: Արտասահմանից ստացված հաղորդագրությունների համաձայն Պողոս Նուբարի ղեկավարած ազգային պատվիրակությունը բարձրացրել էր Միացյալ Հայաստանի անկախության հարցը՝ կազմելով Արևմտյան Հայաստանի կառավարությունը: Հայաստանի Հանրապետությունում ապաստանած արևմտահայ փախստականների շրջանում աշխարհաքաղաքական նման զարգացումները նորից արթնացրել էին մոտ ապագայում հայրենիք վերադառնալու հույսը:

Ստեղծված պայմաններում արևմտահայ փախստականների նոր համագումար հրավիրելու հարցով զբաղվող կազմակերպիչ կոմիտեն ապագա համագումարը համարում էր Հայաստանի Հանրապետությունում արևմտահայերի ներկայացուցչական մարմին՝ «ժողովրդական ներկայացուցչություն», «քաղաքական հաստատություն մը, որ առանց անտես առնելու փախստականության ճգնաժամային վիճակը, ամենէն աւելի և ամենէն առաջ պէտք է զբաղւի Արևմտեան Հայաստանի փախստական հայութեան քաղաքական նպատակներու ձևակերպման խնդրով»⁶⁹: «Արևմտյան Հայաստանի փախստական հայությանը» ուղղված կոչում Արևմտահայ 2-րդ համագումարը հրավիրող կազմակերպիչ կոմիտեն ամրագրել է համագումարի երկու հիմնական նպատակները՝ արևմտահայ փախստականների քաղաքական իդեալների ու նպատակների ձևակերպումը և նրանց՝ Արևմտյան Հայաստան վերադարձի խնդրի լուծումը⁷⁰: Նշված կոչն ավարտվել է բոլոր արևմտահայ փախստականներին ուղղված դիմումով՝ «միանալ այդ երկու մեծ նպատակներու շուրջ, մոռանալ ամէն բան, նոյնիսկ մեր թշվառութիւնը, յաւիտենական թշվառութենէն ազատուելու, համերաշխ, միաբան և աննկուն կամքով, մեր առջև դրուած այդ երկու խնդիրներու սիրուն՝ այդ երկու խնդիրները լուծելու»⁷¹:

Ղեկավարվելով հատվածականության հաղթահարման հիմնանպատակով՝ հանրապետության իշխանություններն արևմտահայ համագումարը դիտարկել են որպես քաղաքական այնպիսի ձեռնարկում, որը պետք է հանգեցներ արևմտահայ հատվածի քաղաքական նպատակների և իդեալների ձևակերպմանը, որի որոշումները պետք է ընդունելի լինեին ինչպես հանրապետությունում ապաստանած արևմտահայ փախստականների, այնպես էլ արտաքին աշխարհի համար: Հանրապետության իշխանությունները ցանկանում էին, որ արևմտահայ համագումարը լիներ այն հարթակը, որտեղ ոչ միայն պետք է ձևակերպվեին արևմտահայոց քաղաքական նպատակները և իդեալները, այլև հանրապետության իշխանությունների ներկայացուցիչների և համագումարում ներկայացված արևմտահայ գործիչների միջև պետք է սկզբնավորվեր որոշակի քաղաքական երկխոսություն: Արևմտահայ համագումարի գործունեության արդյունքում ձևավորվելու էր հանրապետությունում արևմ-

⁶⁷ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 32:

⁶⁸ Նույն տեղում, թ. 31:

⁶⁹ Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, էջ 4:

⁷⁰ Տե՛ս նույն տեղում:

⁷¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մ. 1, թ. 31:

տահայոց քաղաքական ղեկավար մարմին, ինչը հանրապետության իշխանություններին հնարավորություն կտար նրանում ընդգրկված արևմտահայ ղեկավար շրջանակների հետ սկսելու քաղաքական շփումներ՝ դրանք վերածելով միջհատվածական քաղաքական երկխոսության: Այդպիսի քաղաքական շփումները և երկխոսությունը հնարավորություն կընձեռեն հասնելու հանրապետության առջև ծառայած քաղաքական կարևոր խնդիրներից մեկի՝ արևմտահայերին հանրապետության ներքաղաքական կյանքում ներգրավելու, պետական շինարարությանը նրանց մասնակից դարձնելու հարցի լուծմանը:

Արևմտահայ համագումարի անհրաժեշտության նմանօրինակ գիտակցումն է նպաստել այն բանին, որ Հայաստանի Խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 28-ին հավանության է արժանացրել արևմտահայ համագումարի հրավիրման համար կազմակերպիչ կոմիտեին 35 հազար ռուբլի նպաստ տալու մասին օրենքի նախագիծը⁷²: Եվ դա՝ չնայած այն հանգամանքին, որ մի օր առաջ ՀՀ կառավարությունը, լսելով ֆինանսների նախարարի Հայաստանի Խորհրդի նախագահի կողմից իրեն ուղարկված Արևմտահայ երկրորդ համագումարի կազմակերպիչ կոմիտեի դիմանի խնդիրը՝ տաճկահայ համագումար հրավիրելու ծախքերի համար 35.000 ռուբ. հատկացնելու մասին զեկուցումը, որոշել է գրել Հայաստանի Խորհրդի նախագահին, որ «Մինիստրների խորհրդի եզրակացությունը տալու համար պետք է ունենալ պատասխան հետևյալ հարցերին. ա) ի՞նչ նպատակով է հրավիրվում համագումարը, բ) ի՞նչ ձևով պիտի կազմվի և գ) ի՞նչ նախահաշվով է պահանջվում 35.000 ռ. ծախք»⁷³: Ինչպես տեսնում ենք, ՀՀ կառավարությունն արևմտահայ համագումարին առնչվող հարցի առաջին քննարկման ժամանակ ցուցաբերել է ֆինանսիստին բնորոշ ձևական վերաբերմունք: Չնայած դրան՝ հանրապետության իշխանությունները, մեծապես կարևորելով արևմտահայ համագումարի քաղաքական նշանակությունը, գիտակցելով դրա հրավիրման անհրաժեշտությունը, հատկացրել են համապատասխան միջոցներ՝ այն կազմակերպելու համար: Հայաստանի Խորհրդի 1918 թ. տարեվերջյան նիստում ընդունվել է արևմտահայ համագումարի հրավիրման և անցկացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման մասին օրենք⁷⁴: Նախարարների խորհրդի 1919 թ. փետրվարի 3-ի նիստում քննարկվել է Արևմտահայ 2-րդ համագումարի կազմակերպիչ կոմիտեի՝ համագումարի բացմանը ՀՀ կառավարության ներկայացուցիչ ուղարկելու մասին հրավերը⁷⁵, և որոշվել «հանձնարարել Մինիստր-նախագահին կառավարության կողմից ներկա լինել Արևմտահայերի 2-րդ համագումարի բացմանը»⁷⁶: Հայաստանի Խորհրդի և ՀՀ կառավարության նմանօրինակ դիրքորոշումները վկայում են այն մասին, թե որքան է կարևորվել հրավիրվող համագումարը հանրապետության ղեկավարության կողմից:

Հայաստանի Հանրապետությունում ապաստանած արևմտահայ փախստականների քաղաքական նպատակները և իդեալներն իրենց ձևակերպումն են ստացել 1919 թ. փետրվարի

⁷² Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), էջ 31:

⁷³ Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 85:

⁷⁴ Տե՛ս Հայաստանի Խորհրդի հաստատած օրենքները (1918-1919 թթ.), Եր., 1919, էջ 37:

⁷⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 23, մաս 1, թ. 30:

⁷⁶ ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 14, մաս 1, թ. 19:

6-13-ը կայացած Արևմտահայ 2-րդ համագումարում⁷⁷: Մինչև համագումարի պաշտոնական բացումը՝ փետրվարի 4-ին և 5-ին, տեղի են ունեցել նախապատրաստական երկու նիստեր, որոնց ընթացքում պատգամավորները ծանոթացել են կազմակերպիչ կոմիտեի կատարած աշխատանքին և գաղտնի քվեարկությամբ ընտրել համագումարի երեք համանախագահներ՝ Գր. Բուլղարացի, Վ. Տերոյան և Վ. Քրմոյան, երկու քարտուղարներ՝ Ա. Կիտուր և Հ. Վարդապետյան, երեք հոգուց կազմված մանդատային հանձնաժողով, ինչպես նաև շրջաններից՝ զեկուցումների, քաղաքական, ներգաղթի ու հաշվեհարդարի և կազմակերպչական հանձնաժողովների նախագահներ: Համագումարի աշխատանքին վճռական ծայնի իրավունքով մասնակցել են 55 պատգամավորներ, որոնցից 47-ը արևմտահայ դաշնակցականներ էին⁷⁸, 5-ը՝ Սահմանադիր Ռամկավար կուսակցության անդամներ⁷⁹:

Արևմտահայ 2-րդ համագումարի պաշտոնական բացման օրը՝ 1919 թ. փետրվարի 6-ին, վարչապետ Հ. Քաջազունին համագումարին մասնակցող արևմտահայ ղեկավար շրջանակների առջև իր ելույթում հայտարարել է հատվածականության հաղթահարման քաղաքական հիմնանպատակի մասին⁸⁰: Վարչապետի հայտարարությունը ոչ միայն պետության առջև ծառայած ազգային-քաղաքական հիմնախնդրի լուծմանն ուղղված ցանկության ներկայացում էր արևմտահայ համագումարի պատգամավորներին, այլև հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ղեկավար շրջանակներին ուղղված հաղորդագրություն այն մասին, որ հանրապետության իշխանությունները պատրաստ են այդ հիմնանպատակի իրականացման համար համագործակցելու նրանց հետ: Հայաստանի Խորհրդի անդամ Ս. Վրացյանի՝ այդ օրվա ելույթի առանցքը նույնպես եղել է հատվածականության հաղթահարման հարցը⁸¹: Ս. Վրացյանը՝ որպես Հայաստանի Հանրապետության օրենսդիր բարձրագույն մարմնի ներկայացուցիչ, Արևմտահայ 2-րդ համագումարի պատգամավոր է ճանաչվել և բավականին ակտիվ մասնակցություն ցուցաբերել համագումարի աշխատանքներին՝ քննարկվող հարցերի շուրջ առաջ մղելով հանրապետության իշխանությունների որդեգրած մոտեցումները: Համագումարի աշխատանքներին հանրապետության իշխանություններն ապահովել են իրենց ակտիվ և կառուցողական մասնակցությունը: Մեր կարծիքով նման աշխատառճը պայմանավորված է եղել նաև այն հանգամանքով, որ հանրապետության իշխանությունները հաշվի են առել Արևմտահայ 1-ին համագումարի և դրան հաջորդած ժամանակաշրջանի փորձը⁸²: Այդպիսի դիրքորոշումով ՀՀ իշխանություններն արտահայտել են հատվածականության հաղթահարման նպատակով արևմտահայ ղեկավար շրջանակների հետ համագործակցելու իրենց պատրաստակամությունը:

Արևմտահայ 2-րդ համագումարն իր բուն աշխատանքը սկսել է շրջաններից արևմտահայ փախստականների «գարհուրելի կացութեան մասին» պատգամավորների հաշվետվությունների հիման վրա «Շրջաններէն եկած զեկուցումներուն յանձնաժողովի»⁸³ նախա-

⁷⁷ Տե՛ս Հայրապետյան Վ., Արևմտահայ 2-րդ համագումարը, «Բանբեր Երևանի համալսարանի». հասարակական գիտություններ, Եր., 1992, էջ 136-146:

⁷⁸ Տե՛ս «Աշխատանք», Եր., 18 փետրվարի 1919 թ.:

⁷⁹ Տե՛ս Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, էջ 14:

⁸⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 4-5:

⁸¹ Տե՛ս նույն տեղում:

⁸² Տե՛ս Հայրապետյան Վ., Հատվածականության դրսևորումները Արևմտահայ առաջին համագումարում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Եր., 2013, էջ 82-93:

⁸³ Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, էջ 5:

գահ Ռ. Շատվորյանի ներկայացրած զեկուցման քննարկումով: Զեկուցողը «մանրամասն նկարագրում էր այն թշվառ և անտանելի դրությունը, որ ապրում էր տաճկահայ ժողովուրդը: Սովը մի կողմից, համաճարակը և հակասանիտարական պայմանները մյուս կողմից օրական տանում էին հարյուրավոր զոհեր»⁸⁴: Որպես արդյունք ընդունվում է «Շրջաններէն եկած զեկուցումներու մասին» կամ, ինչպէս իրենք՝ պատգամավորներն են անվանել, «Սովի մասին» բանաձևը: Համագումարը, արձանագրելով, որ փախստականությունը «փաստօրէն սովի ճիրաններու մէջ վերջնական բնաջնջման նախօրեակը կապրի», որոշում է, «որ իրմէ ընտրած մարմինը ազդու դիմումներ կատարէ դաշնակիցներու կովկասեան ընդհիլանուր» հրամանատարին, դաշնակից պետութիւններու համաերոպական կօմիտեան սին, այլ և Փարիզի մէջ կազմած մեր նոր հայկական կառավարութեան և պահանջել հաց և շուտափոյթ օգնութիւն՝ մահացող ժողովրդի համար, ինչպէս նաև յանձնարարել, որ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեն նպաստի և խնամատարական գործը կազմակերպելու և լաւ հիմքերու վրայ դնելու»⁸⁵: Միաժամանակ «որոշեցաւ համագումարի կողմէ շնորհակալութեան խօսք ընել Հայաստանի կառավարութեան, անգլիական Լորդ Մէրի ընկերութեան, Ամերիկեան նպաստամատոյց ընկերութեան և բոլոր անոնց, որոնք համատարած տառապանքի մէջ որոշ օժանդակութիւն ցոյց տած են արևմտահայ փախստականութեան»⁸⁶: Հետաքրքրական է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ արևմտահայ համագումարի նման վերաբերմունքի մասին տեղեկատվությունը տեղ է գտել միայն մամուլի հաղորդագրություններում և ոչ թե Արևմտահայ 2-րդ համագումարի հետագայում հրատարակված պաշտոնական նյութերում: Այնուամենայնիվ, արևմտահայ համագումարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության նկատմամբ ցուցաբերած շնորհակալական վերաբերմունքը հիրավի առաջինն էր հանրապետության իշխանությունների կազմավորումից հետո ընկած ժամանակահատվածում:

Արևմտահայ 2-րդ համագումարի ընդունած կարևոր փաստաթղթերից էր «Ներգաղթի մասին» բանաձևը, որով ամրագրվել է արևմտահայերի համար ամենաբաղձալի ցանկությունը՝ վերադառնալ հայրենիք և ապրել իրենց օջախներում: Թե՛ հարցի մասին զեկուցողը՝ ներգաղթի հանձնաժողովի նախագահ Ա. Սասունին, և թե՛ մտքերի փոխանակությանը մասնակցած պատգամավորներն առանձնակի ընդգծել են ներգաղթը պետականորեն կազմակերպելու անհրաժեշտությունը⁸⁷: Այդ փաստաթղթում նշվում էր. «Նկատի ունենալով մօտիկ ապագային տեղի ունենալիք արևմտահայ փախստականներու ներգաղթը դէպի իրենց ծննդավայրը և որ այդ ներգաղթը նպատակահարմար և արդիւնաւէտ կը լինի միայն այն ժամանակ, երբ այն կատարի որոշ կանոնադրութեամբ, ժողովրդի ֆիզիքական ապահովութեան անհրաժեշտ պայմաններու մէջ: Համագումարը կը հրահանգէ ընտրելիք մարմինն այժմէն անհրաժեշտ միջոցներու ձեռնարկել պատմական Միացեալ Հայաստանի կառավարութեան մօտ և դաշնակիցներու ներգործօն միջամտութեամբ և աջակցութեամբ պետականօրէն ապահովելու ներգաղթող ժողովուրդի ֆիզիքա-

⁸⁴ «Ժողովուրդ», Եր., 14 փետրվարի 1919 թ.:

⁸⁵ Համառօտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կօմիտեի հաշիվը, էջ 11:

⁸⁶ «Աշխատանք», Եր., 18 փետրվարի 1919 թ.:

⁸⁷ Տես նույն տեղում:

կան գոյութիւնը և պարենատրման անհրաժեշտ պայմանները, ինչպէս նաև անոր հետ-
ևող վերաշինութեան գործի իրականացման անհրաժեշտ տուեալները հաւաքելու»⁸⁸:

Արևմտահայ փախստականության քաղաքական նպատակների հարցը լուրջ, վիճաբա-
նություններով հագեցած, մի քանի օրվա քննարկման առարկա դարձավ Արևմտահայ 2-րդ
համագումարում: Փետրվարի 10-ին քաղաքական հանձնաժողովի կողմից առաջինը զեկու-
ցումով հանդես եկավ քաղաքական հանձնաժողովի նախագահ բժիշկ Խ. Բոնապարտյանը:
Նա նշեց, «որ հանձնաժողովին զբաղեցրել են հետևյալ խնդիրները: 1. Միացյալ Հայաստանի
գաղափարի հայտարարությունը: 2. Նուբար փաշայի կառավարության ճանաչումը և վստա-
հությունը: 3. Անկախ, Մի-ացյալ Հայաստանի պետական գոյության երաշխավորումը և օ-
րիենտացիան: 4. Մեր դիրքը դեպի Հայաստանի Հանրապետության պարլամենտը և կառա-
վարությունը: 5. Միացյալ Հայաստանի վերաբերմունքը դեպի Հայաստանից դուրս գտնված
հայությունը: 6. Մեր վերաբերմունքը դեպի տաճիկ կառավարությունը»⁸⁹: Քաղաքական
հանձնաժողովը միաձայն ընդունել է «Միացեալ Հայաստանի գաղափարի յայտարարութիւնը
և միաձայն վստահութեան քուէն է տուել Պօղոս Նուբարի կազմած կառավարութեանը»⁹⁰:

Հայաստանի Հանրապետության նկատմամբ համագումարի դիրքորոշման հարցում
հանձնաժողովում երկու իրարամերժ կարծիքներ էին ձևավորվել: «Մի մասը գտել է, որ
պէտք է մի պատմական ակտ կատարել, յայտարարելով Միացեալ Հայաստանի անկախու-
թիւնը և նոյնիսկ պատգամաւորներ ուղարկել պարլամենտ,- ասել է զեկուցող Խ. Բոնա-
պարտյանը:- Միւս մասի կարծիքն է, որ ինչպէս տաճկահայերը մինչ այժմ չեն ցանկացել այս
կամ այն պետութեան քաղաքացիները լինելու, այժմ էլ չեն կարող լինել և մտնելով պարլա-
մենտ, պէտք է դառնան Արարատեան հանրապետութեան քաղաքացիներ, որով և կմեռնի
տաճկահայ դատը»⁹¹: Փետրվարի 11-ին Խ. Բոնապարտյանը հանդես է եկել քաղաքական
հանձնաժողովի երկրորդ ամփոփիչ զեկուցումով՝ ներկայացնելով երկու նոր բանաձևեր: Ար-
տահայտելով միևնույն մտտեցումը արևմտահայերին հուզող քաղաքական խնդիրների վերա-
բերյալ՝ նա քննարկման դրված նախագծերը տարբերակել է Հայաստանի Հանրապետութե-
ան նկատմամբ ունեցած դիրքորոշմամբ: Քաղաքական հանձնաժողովն այդպես էլ չկարո-
ղացավ հաղթահարել առկա տարաձայնությունները՝ մնալով երկու մասի բաժանված⁹²: Խ.
Բոնապարտյանի ներկայացրած հանձնաժողովի երկրորդ զեկուցումից հետո քաղաքական
բանաձևի շուրջ ծավալվել է բուռն վիճաբանություն: Իր ելույթում Ռ. Դրամբյանը հիմնավորել
է համագումարի մեծամասնության տեսակետը. «Այս համագումարի առանցքը քաղաքական
հարցն է: Միացյալ Հայաստանի մասին եկանք այն եզրակացության, որ եթէ Կովկասահա-
յությունը մեզանից անջատվի, Հայաստանը կը կորցնի իր նշանակությունը, որովհետև հայ
ժողովուրդը չունի ստեղծագործելու համար բավարար ուժեր, եթէ մյուսները չօգնեն նրան: Ե-
թէ մենք ունենանք երկու անջատ հայրենիքներ, ջլատված կը լինենք, ունենալ մեկ հայրենիք
և մեկ կառավարություն, դա է եղել բոլոր հայերի իդեալը: Հանձնաժողովի մեծամասնությունը
եկավ այն եզրակացության, որ այդ ակտը պետք է կատարել ամեն գնով, այսինքն՝ միացման

⁸⁸ Համառօտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտէի հաշիվը, էջ 12:

⁸⁹ «Ժողովուրդ», Եր., 16 փետրվարի 1919 թ.:

⁹⁰ Նույն տեղում:

⁹¹ Նույն տեղում:

⁹² Տես «Ժողովուրդ», Եր., 26 փետրվարի 1919 թ.:

հարցը որոշել գործնականապես, եթե մենք հայտարարում ենք միացյալ Հայաստանի անկախությունը, ապա և աստիճանաբար պիտի գործի անցնել»⁹³:

Ռամկավար փոքրամասնության տեսակետն արտահայտած Ե. Հարությունյանը գտնում էր, որ համագումարն իր ձայնը պետք է միացնի Պողոս Նուբարի կառավարության «պատմական ակտին», սակայն «միաժամանակ չպիտի անել այնպիսի քայլեր, որոնց վճիռը կախված է ամբողջ արևմտահայությանից», «չպետք է անմիջական մասնակցություն ցույց տալ պարլամենտի մէջ, որպէսզի թուրքահայ հարցը իր միջազգայնութիւնից դուրս չգա: ...Եթէ անմիջապէս արևմտահայերը մտնեն պարլամենտի մէջ, կը ստեղծի հակասական դրութիւն, որովհետև այդպիսով նրանք ոչ միայն պիտի ճանաչեն Պողոս Նուբարի կառավարութիւնը, այլև Քաջազունունը: Միացեալ Հայաստանի գաղափարը պիտի իրագործուի երկու կառավարութիւնների փոխադարձ համաձայնութեամբ, որոնք կը մշակեն մի սահմանադրութիւն մեր երկրի համար և այն ժամանակ, իհարկէ, արևմտահայերն էլ կլինեն այս անգամ Միացեալ Հայաստանի պարլամենտում: Իսկ ներկայ պայմաններում ներկայացուցիչներ ուղարկելը պարլամենտ արևմտահայերի կողմից, աննպատակայարմար կլինի մեր դատի շահերի տեսակէտից»⁹⁴: Առաջին տեսակետը պաշտպանել են Ս. Վրացյանը, Գ. Բուլղարացին, Հ. Կարինյանը, Զ. Կորկոտյանը, Ա. Կիտուրը և Գ. Ոսկերջյանը, երկրորդը՝ ռամկավարներ Ս. Թովալյանը, Մ. Մալոյանը և Հ. Վարդապետյանը⁹⁵:

Արևմտահայ փախստականների քաղաքական մյուս նպատակներն ամրագրվել են Արևմտահայ 2-րդ համագումարի կողմից ընդունված քաղաքական բանաձևում, որն առաջին և երկրորդ ընթերցմամբ կետ առ կետ քննելուց հետո վերջնական տեսքով ընդունվել է փետրվարի 12-ին⁹⁶: Արևմտահայ 2-րդ համագումարը՝ ա) «սրտագին» ողջունել և իր հերթին հայտարարել է ազատ և միացյալ Հայաստանի անկախությունը, բ) իր լիակատար վստահությունն է հայտնել «Ազատ և Միացեալ Հայաստանի Պողոս-Նուբար փաշայի Անդրանիկ Դահլիճին», գ) հայտարարել է «իր վճռական որոշումն ու կամքը՝ ունենալ քաղաքական և պետական մէկ միութիւն համազգային հատաձևերու և երկրամասերու միաւորութեամբ»⁹⁷: Համագումարը պարտադրել է իր կողմից ընտրված գործադիր մարմնին դ) Պողոս Նուբարի «նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքներն, որոնք հարկաւոր են Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար»⁹⁸, ինչպես նաև ե) «գործնական քայլեր առնել Արարատեան Հանրապետութեան նախարարութեան և խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու և իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութիւններու մէջ համազգային միութիւնը իրականացնելու համար»⁹⁹: Բանաձևի վերջին երեք կետերով համագումարը պահանջել է գ) «Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը, դաշնակից պետութիւններ

⁹³ Նույն տեղում:

⁹⁴ Նույն տեղում:

⁹⁵ Տե՛ս նույն տեղում:

⁹⁶ Տե՛ս Համառօտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, էջ 13:

⁹⁷ Նույն տեղում:

⁹⁸ Նույն տեղում:

⁹⁹ Նույն տեղում, էջ 13-14:

րու քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակութեամբ և աջակցութեամբ», է) «- Հայկական Մեծ Եղեռնի հեղինակ և պատասխանատու ճիառներուն Վիլիելմի, Էնվերի, Թալէաթի, Ճեմալի, Նազըմի, Պէիաէտտին-Շաքիրի և ընկեր նահանգապետներու, կառավարիչներու և այն բոլոր ղեկավարներու զինուորադաշտային դատարանով պատժիլը», թ) «Հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշի օսմանեան կառավարութեան»¹⁰⁰:

Քաղաքական բանաձևի 5-րդ կետի ընդունման դեմ քվեարկելով և «պատճառաբանված գրութիւն մը ներկայացնելով»՝ ռամկավար հինգ պատգամավորները լքել են համագումարը¹⁰¹: «Մենք կանգնած էինք առողջ և հիմնական տեսակէտի վրայ - որ այս համագումարը կրնայ հազարամի ցանկութիւններ հայտնել, բայց վճռական և գործնական քայլերու հրահանգը սպասելու ենք վերէն - Փարիզի մեր պատուիրակութենէն և համախորհուրդէն: - «Ինչո՞ւ հեռացանք Արեւմտահայ Բ համագումարէն» հողվածում պարզաբանել են սահմանադիր ռամկավարները: - Մնալով փոքրամասնութեան մէջ, միաժամանակ չդաւանելով մեր հիմնական մտածողութեան, մենք ըրինք մեր յայտարարութիւնը և դուրս եկանք համագումարէն, ձգելով ամբողջ պատասխանատուութիւնը մնացողներու վրայ»¹⁰²: Արեւմտահայ ռամկավարների այդ «հիմնական մտածողութեան» էությունն այն էր, որ «ներկայիս Փարիզի մէջ թիրքահայերը ունեն խորհրդաժողով, 45-50 պատուիրակներու մասնակցութեամբ (հաւաքված զանազան գաղութներէ, բուն երկրէն և վերջապէս Կովկասէն), իսկ այդ խորհրդաժողովը համաշխարհային վեհաժողովի կողքին ունի անելի լայն հնարաւորութիւն և անելի լայն իրաւունքներ ընթացք տալու թիրքահայ խնդրին, քան փախստական արևմտահայութեան մէկ մասի այս սահմանափակ համագումարը», և, «...միանալով այս հանրապետութեան և մեր անմիջական մասնակցութիւնը բերելով այս բարլամենտին և կառավարութեանը, մենք զմեզ կղզիացուած կըլլանք ամբողջ թիրքահայութենէն, իսկ այդ դաւանանութիւն է ամբողջ թիրքահայ ժողովրդի կամքի և ամբողջութեանը նկատմամբ»¹⁰³: Ռամկավարների նմանօրինակ տեսակետի միտքն այն էր, որ հայկական հարցն իր լուծումը պետք է ստանա Փարիզի հաշտության կոնֆերանսում, և Միացյալ Հայաստանի անկախությունը պետք է հռչակվի միայն Փարիզում Պողոս Նուբարի ղեկավարությամբ ձևավորված նախարարական դահլիճի միջոցով: Այդ տեսակետն էին պաշտպանում նաև ազգային պատվիրակության կողմից Փարիզում հրավիրված համաժողովը և վերջինիս կողմից ձևավորված Պողոս Նուբարի նախարարական դահլիճը:

Արևմտահայ 2-րդ համագումարում հանրապետության իշխանությունների տեսակետն առաջադրել և պաշտպանել է Ս. Վրացյանը իր համախոհների հետ: Նրանք հատվածականության հարթահարման, Միացյալ Հայաստանի անկախության հռչակման համար որպես հենակետ են դիտարկել արդեն գոյություն ունեցող Հայաստանի Հանրապետությունը՝ իր տարածքով, խորհրդարանով, բանակով և կազմակերպված իշխանությամբ: «Ամբողջ իր ծավալով հայկական հարցի լուծման համար ելակետ մենք վերցրեցինք Հանրապետությունը, - ներկայացնում է հանրապետության իշխանությունների տեսակետը Հ. Քաջազունին,-

¹⁰⁰ Նույն տեղում, էջ 14:

¹⁰¹ Տե՛ս նույն տեղում:

¹⁰² «Վան-Տոսպ», Եր., 31 մարտի 1919 թ.:

¹⁰³ Նույն տեղում:

Հանրապետության ամրապնդումը մենք հայտարարեցինք որպես մեր քաղաքական ծրագիր՝ բոլոր մնացած հայկական հողերը նրան հետագայում միացնելու համար»¹⁰⁴: Եթե վերանանք վերը բերված երկու մոտեցումներում տեղ գտած միջհատվածական, միջկուսակցական հակասություններից, ապա, անշուշտ, վերջին մոտեցումն ավելի իրատեսական է եղել և ունեցել հատվածականության հաղթահարմանը միտված քաղաքական դիրքորոշում:

Արևմտահայ 2-րդ համագումարի աշխատանքի վերջին օրը՝ փետրվարի 13-ին, գաղտնի քվեարկությամբ ընտրվել է «Արարատեան Հանրապետութեան մէջ ապրող Արևմտահայ հատաձի «Գործադիր Մարմին», որի կազմում ընտրվել են Սմբատ Բորոյանը, Խաչատուր Բոնապարտյանը, Արմեն Սասունին, Գրիգոր Բուդարացին, Վարազդատ Տերոյանը, Ռուբեն Դրամբյանը, Վահագն Քրմոյանը, Վաղարշակ Հոխիկյանը և Արսեն Կիտուրը»¹⁰⁵: Գործադիր մարմնի կարգավիճակը և իրավասության շրջանակները սահմանվել են նույն օրը համագումարում հաստատված «Կազմակերպչական բանաձեռում»¹⁰⁶: Այստեղ նորից ամրագրվել է, որ Գործադիր մարմինը «կիրականացնէ համագումարի որոշումները» և «կը շարունակէ մնալ իր ստանձնած պարտականութիւններու և իրաւասութեան մէջ մինչև Միացեալ Ազատ Հայաստանի պետական-օրէնսդրական հաստատութիւններու իրականացումը՝ Հայութեան միւս հատաձիներու՝ Պողոս Նուպարի կաբինետի, Արարատեան հանրապետութեան կառավարութեան և խորհրդարանի գործակցությամբ և համաձայնությամբ»¹⁰⁷: Ընդունելով ողջույնի նամակներ՝ ուղղված Ամենայն Հայոց կաթողիկոսին, Պողոս Նուբարին, Հաշտության կոնֆերանսին, «Արարատեան Հանրապետութեան» կառավարությանը և Հայաստանի Խորհրդին, Արևմտահայ 2-րդ համագումարը 1919 թ. փետրվարի 13-ին ավարտել է իր աշխատանքը:

Այսպիսով՝ Արևմտահայ 2-րդ համագումարում իրենց ձևակերպումն են ստացել Հայաստանի Հանրապետությունում ապաստանած արևմտահայ փախստականների՝ տվյալ ժամանակաշրջանում առաջնահերթ լուծումներ պահանջող ազգային-քաղաքական նպատակները և իդեալները: Համագումարն ընտրել է Գործադիր մարմին, որը կոչված է եղել նաև ՀՀ իշխանությունների հետ քաղաքական հարաբերություններում ներկայացնելու հանրապետությունում ապաստանած արևմտահայ փախստականներին: Այստեղ առաջին անգամ ներկայացվել է նաև հանրապետության իշխանությունների ցանկությունը՝ վերացված տեսնելու հատվածականությունը: Արևմտահայ 2-րդ համագումարը՝ որպես քաղաքական երկխոսության հարթակ, արդարացրել է հանրապետության իշխանությունների սպասումները: Համագումարի աշխատանքներին ակտիվ և կառուցողական մասնակցությամբ հանրապետության իշխանություններն արտահայտել են իրենց պատրաստակամությունը՝ հատվածականության հաղթահարման նպատակով համագործակցելու արևմտահայ ղեկավար շրջանակների հետ: Իր հերթին Արևմտահայ 2-րդ համագումարը ոչ միայն ընդունել է «Ազատ և Միացեալ Հայաստանի անկախութիւնը» հայտարարելու և համազգային միությունը կյանքի կոչելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության ու խորհրդարանի հետ համագործակցելու մասին քաղաքական որոշում, այլև պարտադրել համագումարում ընտրված Գործադիր մարմնին ձեռնարկել համապատասխան քայլեր:

¹⁰⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 431, թ. 19:

¹⁰⁵ Համառոտ Տեղեկագիր Արևմտահայ երկրորդ համագումարի և կազմակերպիչ կոմիտեի հաշիվը, էջ 15:

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 14-15:

¹⁰⁷ Նույն տեղում, էջ 14:

Ի մի բերելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է արձանագրել, որ հատվածականությունն իր դրսևորումներով Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից դիտարկվել է որպես խոչընդոտ պետության կայացման գործում: Հատվածականությունը հաղթահարելու հանրապետության իշխանությունների հիմնանպատակի մասին առաջին անգամ արևմտահայ և արևելահայ հանրության համար բարձրաձայնվել է Արևմտահայ 2-րդ համագումարի ամբիոնից:

Հատվածականության հաղթահարմանն ուղղված քաղաքականություն հանրապետության իշխանություններն իրականացրել են դեռևս մինչև Արևմտահայ 2-րդ համագումարն ընկած ժամանակահատվածում: Հատվածականության հաղթահարմանն է ուղղված եղել արևմտահայ փախստականների տեղավորման, նրանց համար առանձին ստեղծված առողջապահական և կրթական հաստատությունների վերացման քաղաքականությունը: Արևմտահայ 2-րդ համագումարը հանրապետության իշխանությունները դիտարկել են որպես նման քաղաքականության դրսևորում: Ուստի այն դարձավ Հայաստանի Հանրապետության նկատմամբ արևմտահայ փախստականների բացասական, անտարբեր վերաբերմունքը դրականի վերափոխելու որոշիչ փուլանիշ: Հանրապետության իշխանությունների հետ համագործակցության սզկբնավորման համար քաղաքական հիմքեր ստեղծելով՝ Արևմտահայ 2-րդ համագումարը բեկումնային նշանակություն ունեցավ հատվածականության հաղթահարման գործում:

Կարեն Պ. Հայրապետյան - գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է Հայաստանի առաջին Հանրապետության պատմության հիմնահարցերը, արևմտահայ գաղթականությանը և հատվածականությանն առնչվող պատմագիտական հիմնախնդիրները:

Summary

THE POLICY OF AUTHORITIES OF THE REPUBLIC OF ARMENIA TOWARDS OVERCOMING FRAGMENTARITY (1918-1919)

Karen P. Hayrapetyan
Candidate of Sciences in History

Key words - Republic of Armenia, Western Armenian refugees, fragmentarity, policy to overcome fragmentarity, policy on accommodation of refugees, Second Congress of Western Armenians.

From the first days of their formation, the authorities of the Republic of Armenia (1918-1920) faced the problem of Western Armenian refugees. In the

matter of its resolution, both the purely socio-economic aspects of the problem and its political, fragmentary features should be taken into account. With the goal of overcoming fragmentation with its negative manifestations, the republican authorities, together with the solution of directly refugee issues, needed to take appropriate steps to overcome in the minds of Western Armenian refugees the distrust and alienation that existed in their attitude towards the authorities and the population of the newly formed Republic of Armenia. For this purpose, it was necessary to take certain steps to integrate the Western Armenian refugees into the socio-economic and socio-political life of the Republic of Armenia, to create conditions for involving Western Armenians in the creation of the independent Armenian state. Ultimately, republican authorities intended to overcome the negative manifestations of fragmentarity.

The authorities of the first Republic of Armenia considered fragmentarity an obstacle to the creation of a state. The overcoming of fragmentarity as the main goal of the republic's authorities was first voiced from the rostrum of the Second Congress of Western Armenians.

The policy of the republic's authorities to overcome the fragmentarity was carried out before the Second Congress of Western Armenians. The policy of accommodating Western Armenian refugees, the liquidation of medical and educational institutions created for them, also had the goal of overcoming fragmentarity. In itself, the Second Congress of Western Armenians for the authorities of the republic was the implementation of the policy of overcoming fragmentarity. At the congress, the political goals and ideals of the Western Armenian refugees who found refuge in the Republic of Armenia were formulated. The congress was a milestone in a positive change in the negative attitude of the Western Armenian refugees towards the Republic of Armenia. The Second Congress created political grounds for starting cooperation with the authorities of the republic. For this reason, the Second Congress of Western Armenians actually had a breakthrough value in overcoming fragmentarity.

ПОЛИТИКА ВЛАСТЕЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ ПО ПРЕОДОЛЕНИЮ ФРАГМЕНТАРНОСТИ (1918-1919 ГГ.)

Карен П. Айрапетян
канд. ист. наук

Ключевые слова - Республика Армения, западноармянские беженцы, фрагментарность, политика по преодолению фрагментарности, политика по размещению беженцев, Второй съезд западных армян.

Перед властями Республики Армения (1918-1920 гг.) с первых дней их образования встала проблема западноармянских беженцев. В деле ее разрешения должны были учитываться как чисто социально-экономические аспекты проблемы, так и ее политические фрагментарные особенности. Имея целью преодолеть фрагментарность с ее негативными проявлениями, республиканским властям необходимо было вместе с решением непосредственно вопросов беженцев предпринять соответствующие шаги для преодоления в сознании западноармянских беженцев того недоверия и отчужденности, которые существовали в их отношении к властям и населению вновь образованной Республики Армения. С этой целью необходимо было предпринять определенные шаги для интегрирования западноармянских беженцев в социально-экономическую и общественно-политическую жизнь Республики Армения, создать условия для вовлечения западных армян в дело созидания независимого армянского государства. В конечном счете республиканские власти намеревались преодолеть негативные проявления фрагментарности.

Властями первой Республики Армения фрагментарность считалась препятствием в деле создания государства. О преодолении фрагментарности как основной цели властей республики впервые было озвучено с трибуны Второго съезда западных армян.

Политику по преодолению фрагментарности власти республики осуществляли еще до Второго съезда западных армян. Политика размещения западноармянских беженцев, ликвидация созданных для них отдельных медицинских и образовательных учреждений также имели целью преодоление фрагментарности. Сам по себе Второй съезд западных армян являлся для властей республики осуществлением политики преодоления фрагментарности. На съезде были сформулированы политические цели и идеалы нашедших пристанище в Республике Армения западноармянских беженцев. Съезд явился вехой в изменении в

положительную сторону отрицательного отношения западноармянских беженцев к Республике Армения. Второй съезд создал политические основания для начала сотрудничества с властями республики. По этой причине Второй съезд западных армян фактически имел прорывное значение в деле преодоления фрагментарности.

REFERENCES

1. «Ashkhatank'», Yer., 11 p'etrvari 1919 t'. **(In Armenian)**.
2. «Ashkhatank'», Yer., 18 p'etrvari 1919 t'. **(In Armenian)**.
3. **Astuatsatrean A.**, Rubēnē, «Hayrenik'», yunuar, 1955, N 1 **(In Armenian)**.
4. HAA, f. 198, ts' 1, g. 15, t'. 15 **(In Armenian)**.
5. HAA, f. 198, ts' 1, g. 15, t'. 16 **(In Armenian)**.
6. HAA, f. 199, ts' 1, g. 14, mas 1, t'. 19 **(In Armenian)**.
7. HAA, f. 199, ts' 1, g. 23, mas 1, t'. 30 **(In Armenian)**.
8. HAA, f. 199, ts' 1, g. 23, mas 1, t'. 31 **(In Armenian)**.
9. HAA, f. 199, ts' 1, g. 23, mas 1, t'. 32 **(In Armenian)**.
10. HAA, f. 201, ts' 1, g. 58, t'. 1 **(In Armenian)**.
11. HAA, f. 201, ts' 1, g. 58, t'. 8 **(In Armenian)**.
12. HAA, f. 201, ts' 1, g. 58, t'. 9 **(In Armenian)**.
13. HAA, f. 201, ts' 1, g. 58, t'. 10 **(In Armenian)**.
14. HAA, f. 201, ts' 1, g. 144, t'. 63 **(In Armenian)**.
15. HAA, f. 201, ts' 1, g. 500, t'. 142 **(In Armenian)**.
16. HAA, f. 201, ts' 1, g. 500, t'. 105 **(In Armenian)**.
17. Hamarōt Teghekgagir Arevmtahay yerkrord hamagumari yev kazmakerpich' kōmitēi hashivē, T'iflis, tp. «Ashkhatavor», 1919 **(In Armenian)**.
18. Hayastani Hanrapetut'yan karavarut'yan nisteri ardzanagrut'yunner 1918-1920 t't., Yer., Hayastani azgayin arkhiv, 2014 **(In Armenian)**.
19. Hayastani Hanrapetut'yan parlamenti nisteri ardzanagrut'yunner 1918-1920 t't., Yer., Hayastani azgayin arkhiv, 2010 **(In Armenian)**.
20. Hayastani Hanrapetut'yan parlamenti ōrenk'nerē (1918-1920 t't.), Yer., 1998 **(In Armenian)**.
21. Hayastani Khorhrdi hastatats ōrenk'nerē (1918-1919 t't.), Yer., 1919 **(In Armenian)**.
22. **Hayrapetyan K.**, Arevmtahay 2-rd hamagumarē, «Banber Yerevani hamasarani». hasarakakan gitut'yunner, Yer., 1992 **(In Armenian)**.
23. **Hayrapetyan K.**, Arevmtahay p'akhstakanneri teghavorman k'aghak'akanut'yunē norasteghts Hayastani arajin Hanrapetut'yunum, «Hayagitut'yan harts'er» handes, Yer., 2017 **(In Armenian)**.
24. **Hayrapetyan K.**, Hatvatsakanut'yan drsevorunnerē Arevmtahay arajin hamagumarum, «Patmut'yun yev mshakuyt'» hayagitakan handes, Yer., 2013 **(In Armenian)**.
25. **Hayrapetyan K.**, Hatvatsakanut'yan hagt'aharman himnakhndirē Hayastani Hanrapetut'yunum, «Vēm» hamahaykakan handes, E (ZHZ) tari, 2018, N 4 (64) **(In Armenian)**.
26. **Hayrapetyan K.**, Hatvatsakanut'yan himnakhndirē Hayastani arajin Hanrapetut'yunum (1918-1920 t't.), «Vēm» hamahaykakan handes, E (ZHA) tari, 2013, N 2 (42) **(In Armenian)**.
27. **Hayrapetyan K.**, P'akhstakanneri harts'ē Bat'umi banakts'ut'yunneri avartakan p'ulum, «Patmut'yun yev mshakuyt'» hayagitakan handes, Yer., 2016 **(In Armenian)**.

28. **Hayrapetyan K.**, P'akhstakanneri nkatmamb petakan k'aghak'akanut'yan õrensdrakan dzevakerpumě Hayastani Hanrapetut'yunum (1918 t'. september-hoktember), «Patma-banasirakan handes», Yer., 2004, 1 (165) **(In Armenian)**.
29. «Hayrenik'», Post'ën, yunis, 1924 **(In Armenian)**.
30. «Horizon», T'iflis, 7 septemberi 1918 t'. **(In Armenian)**.
31. «Karavarut'yan lraber», Yer., 6 septemberi 1918 t'. **(In Armenian)**.
32. «Karavarut'yan lraber», Yer., 10 septemberi 1918 t'. **(In Armenian)**.
33. **Řubēn**, Hay yeghap'okhakani mẽ yishataknerě, hat. Ē, Yer., «Adana», 1990 **(In Armenian)**.
34. **Sasuni K.**, Tachkahayastaně rusakan tirapetut'yan tak (1914-1918), Post'ën, 1927 **(In Armenian)**.
35. «Van-Tosp», Yer., 31 marti 1919 t'. **(In Armenian)**.
36. **Vrats'yan S.**, Hayastani Hanrapetut'yun, Yer., «Hayastan», 1993 **(In Armenian)**.
37. «Zhoghovurd», Yer., 25 ogostosi 1918 t'. **(In Armenian)**.
38. «Zhoghovurd», Yer., 14 p'etrvari 1919 t'. **(In Armenian)**.
39. «Zhoghovurd», Yer., 16 p'etrvari 1919 t'. **(In Armenian)**.
40. «Zhoghovurd», Yer., 26 p'etrvari 1919 t'. **(In Armenian)**.
41. «Zhoghovurd», Yer., 19 septemberi 1918 t'. **(In Armenian)**.